Azg Ազգ

11 ՄԱՐՏ 2011 ՈՒՐԲԱԹ 42(4661)

ISSN: 1829-1651

Սոչիի «կառուցողական առաջարկներն» ու համանախագահների հերթական այցը տարածաշրջան

Սոչիում մարտի 5-ին տեղի ունեցած Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան նախագահական մակարդակով հանդիպմանը ղարաբաղյան բանակցությունների շրջանակներում որոշվել է մի քանի հանդիպում կազմակերպել Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների մակարդակով: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը երեկ Բաքվում՝ Ալբանիայի ԱԳ նախարար Էդմոնդ Հաջինաֆոյի հետ համատեղ տված ասուլիսում:

Ադրբեջանական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ, Մամեդյարովի խոսքերով, հավանական է, որ նախարարների մի քանի հանդիպումներից հետո, ռուսաստանյան կողմի նախաձեռնությամբ կազմակերպվի Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների նոր հանդիպում:

Մամեդյարովը նաեւ տեղեկացրել է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջան իրենց այցելությունը կսկսեն մարտի 15-ին: Տարածաշրջանային հերթական այցելության ծրագրման մասին տեղեկացրել էին իրենք՝ համանախագահները, մարտի 9-ի իրենց հայտարարությամբ, իսկ արդեն կոնկրետ ժամանման ամսաթվի մասին տեղեկություն է տվել Մամեդյարովը: Ըստ նրա, համանախագահները նախ կլինեն Բաքվում, ապա Երեւանում:

Մամեդյարովը, որքան էլ վերջին շրջանի ադրբեջանական դիրքորոշմանն անհարիր լինի, ալբանացի գործընկերոջ ներկայությամբ հայտարարել է, թե Ադրբեջանը պատրաստ է շարունակել բանակցությունները ղարաբաղյան հարցի կարգավորման ուղղությամբ: «Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների վերջին հանդիպմանը, որ տեղի ունեցավ Սոչիում մարտի 5-ին, ռուսաստանյան կողմի նախաձեռնությամբ, հնչել են մի շարք կառուցողական առաջարկություններ: Մենք կարծում ենք, որ գործընթացը պետք է շարունակվի», ասել է Մամեդյարովը:

Այսքան «դրական» կեցվածք դրսեւորած Մամեդյարովը, հետաքրքրական է, որ որեւէ կերպ չի անդրադարձել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին հայտարարությանը՝ շփման գծի միջադեպերի հետաքննության առնչությամբ:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Անշուշտ, ինքնորոշման իրավունքը հիմնարար սկզբունքն է»

Հայտարարել է Ֆրանսիայի նորանշանակ արտգործնախարարը Սենատում

Շուրջ 10 օր առաջ Ֆրանսիայի արտգործնախարարի պաշտոնը ստանձնած, նախկինում այդ երկրի պաշտպանության նախարար **Ալեն Ժյուպենը**, անցած չորեքշաբթի ֆրանսիական Սենատում հանդես է եկել ուշագրավ հայտարարությամբ: Պատասխանելով պատգամավոր, «Հայաստան-Ֆրանսիա բարեկամության խմբի» ներկայացուցիչ Ֆրանսուա Ռոբլուանի հարցին, թե ի՞նչ նախաձեռնություններով է հանդես գալիս պաշտոնական Փարիզը՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, ղարաբաղյան կարգավորման գործընթացում, մասնավորապես ԼՂ կարգավիճակի որոշման հարցում, ըստ «Ազատություն» ռադիոկայանի՝ նախարար Ժյուպենը, նախ հիշեցրել է Ֆրանսիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահների՝ Մուսկոկայի եւ Լ'Ամվիլայի գագաթաժողովներում մատնանշած բազային սկզբունքները, որոնց վրա պետք է հիմնված լինի ԼՂ հակամարտության կարգավորումը, ապա նաեւ այն հանգամանքը, որ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները Աստրախանում եւ Ասանայում հայտնել են իրենց պատրաստակամությունը՝ «սկզբունքների շուրջը բանակցելու առումով», ապա ընդգծել է. «Անշուշտ, մեզ համար ժողովուրդների

ինքնորոշման իրավունքը որեւէ հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքն է»: Ավելորդ չենք համարում նշել նաեւ, որ պատգամավոր Ռոբլուանը, որն, ի դեպ, ԼՂՀ այցելելու համար Ադրբեջանում «անցանկալի անձ» է, ֆրանսիական Սենատում բարձրաձայնել է. «Ղարաբաղը իր բնակչության կամքին հակառակ Ադրբեջանի կազմում է հայտնվել ԽՍՀՄ կոմկուսի որոշմամբ եւ ԽՍՀՄ փլուզումից հետո վերանվաճել է իր ազատությունը մեծ տառապանքների գնով»: Ռոբլուանը նաեւ, ընդգծելով ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի օրերս կայացած փարիզյան հանդիպումները, տարակուսանք է հայտնել, թե ինչո՞ւ Ստեփանակերտը մասնակից չէ խաղաղ բանակցություններին: Այս կապակցությամբ Ֆրանսիայի արտաքին գաղափարական գերատեսչության ղեկավարը նշել է. «Ժամանակի ընթացքում բանակցությունների ձեւաչափը էվոլյուցիա է ապրել: ԼՂ-ի փաստացի իշխանությունները այլեւս բանակցությունների մասնակից չեն, քանի որ, հիշեցնեմ, աշխարհի ոչ մի երկիր չի ճանաչել այդ տարածաշրջանի հռչակած անկախությունը»:

Բնականաբար՝ հարեւան երկրում անմիջապես թիրախ են դարձել Մինսկի խմբում ֆրանսիացի համանախագահ Ֆասիեի գլխավոր կոորդինատորներից մեկի խոսքերը: Այսպես՝ «հարցում խառնվել են» Բաքվում Ֆրանսիայի դեսպանատունը, Փարիզում Ադրբեջանի դեսպանը եւ, անշուշտ, Ադրբեջանի ԱԳՆ-ն: Վերջինս ադրբեջանական լրատվամիջոցներին խոսացել է՝ «Փարիզում ունեցած մեր դեսպանատան միջոցով հետաքննություն կանցկացնենք եւ այդ մասին կտեղեկացնենք հանրությանը»: Հատկանշական է, որ Բաքվում ֆրանսիական դեսպանատունը հրաժարվել է մեկնաբանել «նախարար Ժյուպենի Սենատում արած հայտարարությունները ԼՂ հակամարտության վերաբերյալ»: Ինչպես տեղեկանում ենք 1news.az-ից, «Փարիզում Ադրբեջանի դեսպան Էլչին Ամիրբեկովը հանդիպում կխնդրի Ֆրանսիայի արտգործնախարարի հետ»: Հարեւան երկրի լրատվամիջոցները միահամուռ «արդարացի» տարակուսանք են հայտնում, թե «ինչպե՞ս կարող է Մինսկի խմբի համանախագահ երկրներից մեկը առանձնացնել եւ կարեւորել հիմնարար սկզբունքներից մեկը միայն»: Լավ է, որ Ադրբեջանում վերջապես ցանկանում են հասկանալ, որ սկզբունքներից որեւէ մեկի առանձնացումը ցանկալի եւ խրախուսելի չէ, բայց, միեւնույն ժամանակ, շատ ավելի լավ կլիներ, որ Բաքվում վերջապես հասկանային նաեւ, որ առհասարակ՝ ոչ միայն Ղարաբաղի պարագայում, եթե ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ավելի հիմնարար չլիներ երկրների տարածային ամբողջականություն սկզբունքից, ապա Ադրբեջան պետությունն այսօր չէր լինի, եւ ընդհանրապես, որեւէ պետություն չէր լինի, որպեսզի խոսեր սեփական տարածային ամբողջականության մասին:

Հ. ԱՓՅԱՆ

ՀԱՍԱՌՈՏ

Կաթողիկոսը մեկնեց Ֆրանսիա

Մարտի 10-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը մեկնել է Ֆրանսիա: Ինչպես տեղեկանում ենք Մայր աթոռից, այցը մեկշաբաթյա է, Վեհափառ հայրապետը էջմիածին կվերադառնա մարտի 16-ին:

Մոսկվան Հռոմի հետ էլ է քննարկել ԼՂ հիմնահարցը

Ռուսաստանի փոխարտգործնախարար Գրիգորի Կարասինը հանդիպել է Իտալիայի ԱԳ փոխնախարար Ալֆրեդո Մանտիկոյին, հանդիպումը կայացել է մարտի 10-ին, հաղորդում է ՌԴ ԱԳՆ մամուլի ծառայությունը: «Հանդիպման ժամանակ քննարկվել են նաեւ արտասահմանյան հարցեր, իրադարձությունը Հարավային Կովկասում, հատկապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջը»:

Մովսես Աբելյանը՝ ՄԱԿ-ի բաժանմունքի տնօրեն

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը երեկ անվտանգության խորհրդի հարցերով ՄԱԿ-ի բաժանմունքի տնօրեն է նշանակել **Մովսես Աբելյանին**: Աբելյանն ունի բազմակողմ դիվանագիտության 20-ամյա փորձ, նախագահել է ՄԱԿ-ի տարբեր մարմինների աշխատանքը: 2003-ից ի վեր նա վարչական ու բյուջետային հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 5-րդ կոմիտեի քարտուղարն էր: 1998-2003 թվականներին Մ. Աբելյանը զբաղեցնում էր ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչի պաշտոնը եւ ունի արտակարգ եւ լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան:

Մարտի 15-ին Հայաստան կժամանեն ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի համազեկուցողները

Մարտի 15-ին ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի համազեկուցողներ Ջոն Պրեսկոտն ու Ակսել Ֆիշերը կժամանեն Հայաստան, իսկ մարտի 16-ին եւ 17-ին նախատեսված են համազեկուցողների հանդիպումները Հայաստանի քաղաքացիական սեկտորի եւ Ազգային ժողովի խմբակցությունների ներկայացուցիչների հետ:

Ազգային փոքրամասնություններին՝ 10 մլն դրամ

Երեկվա նիստում կառավարությունը ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով բյուջեով նախատեսված 10 մլն դրամ հատկացումը բաշխել է 11 ազգային փոքրամասնությունների թվով 14 հասարակական կազմակերպություններին:

Մարտի 17-18-ին ԵԱՀԿ գործող նախագահը կլինի Երեւանում

ԵԱՀԿ գործող նախագահը ծրագրում է հանդիպել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների, Վրաստանի վարչապետի, Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի արտգործնախարարների, քաղաքական լիդերների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Ըստ ԵԱՀԿ պաշտոնական հաղորդագրության, ԵԱՀԿ գործող նախագահ, Լիտվայի արտգործնախարար Աուդրոնիուս Աժուբալիսը հաջորդ շաբաթ կայցելի Ադրբեջան, Վրաստան եւ ապա Հայաստան՝ «հանդիպելու ղեկավարությանն ու քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին՝ ԵԱՀԿ աշխատանքը տարածաշրջանում եւ Լիտվայի նախագահությամբ հռչակված 2011-ի առաջնահերթությունները քննարկելու նպատակով»: Աժուբալիսը Ադրբեջանում կլինի մարտի 13-14-ին, Թբիլիսիում՝ 15-16-ին, Երեւանում՝ մարտի 17-18-ին:

«ԵԱՀԿ տարածաշրջանում ձգձգված հակամարտությունների կարգավորման առաջընթացը ԵԱՀԿ-ում Լիտվայի նախագահության հիմնական առաջնահերթությունն է», նշված է հաղորդագրության մեջ: Ըստ այդմ, ԵԱՀԿ գործող նախագահը տարածաշրջանային այցելության ընթացքում կքննարկի ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը, ԵԱՀԿ-ի հետ համագործակցությունը, ինչպես նաեւ կանդրադառնա աբխազական եւ հարավօսական հարցերին առնչվող ժնեւյան քննարկումների ընթացքին:

Ա. Հ.

Հրաժարականի գնաց Եվրոպայի խորհրդարանի զեկույցը Թուրքիայի վերաբերյալ

Թուրքական մամուլի վկայությամբ՝ դա ավելի կոշտ է, քան նախորդ բոլոր զեկույցները

Մարտի 10-ին Եվրոխորհրդարանը ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընդունել է հոլանդացի զեկուցող Ռիա Օմեն-Ռուիտենի Թուրքիայի վերաբերյալ զեկուցագիրը: Որքան էլ զեկուցագիրը պարտավորեցնող չլինի, այսինքն՝ կրի խորհրդատվական բնույթ, այնուամենայնիվ, Թուրքիային խստագույնս քննադատում եւ վերջինին է ներկայացնում մեղադրանքի երանգ ունեցող մի շարք պահանջներ:

Թերեւս պատահական չէ, որ թուրքական մամուլը դա բնութագրել է «թունոտ»: Թուրքիայի արտգործնախարարությունը համարել է անընդունելի, պատճառաբանելով, թե միակողմանի է, հագեցված իրականության չհամապատասխանող տարրերով եւ ավելացրել է. «Եվրոխորհրդարանի զեկուցագրերը կարող են Թուրքիայի համար որեւէ արժեք ներկայացնել այն դեպքում, եթե լինեն լուրջ, կառուցողական եւ անկողմնակալ»:

Արտգործնախարարությանը լրացրել է պետնախարար եւ գլխավոր բանակցող Էգեմեն Բաղիշը: Նա, թուրքական մամուլի վկայությամբ, համարելով զեկուցագիրը խիստ հակասական եւ իրարամերժ, ընդգծել է. «Մի կողմից «Էրգենեքոնի» գործով դատավարության դանդաղ ընթացքի համար Թուրքիային են քննադատում, իսկ մյուս՝ նույն գործով ընթացքն արագացնելու նպատակով կատարված ձերբակալությունները համարում են մամուլի ազատության սահմանափակում: Սա ինչ է, եթե ոչ հակասականություն»:

Զեկուցագիրը, գոհունակությամբ արտահայտվելով զինվորական եւ քաղաքացիական իշխանությունների փոխհարաբերություններում թուրքական կառավարության արձանագրած առաջընթացի, այսինքն՝ երկրի քաղաքական կյանքում բանակի դերի նվազման մասին, անվտանգության եւ զինված ուժերի բյուջեի վրա խորհրդարանը լիարժեք վերահսկողության երաշխիքներ է պահանջել Թուրքիայից: Այնտեղ նշվել է, որ թուրքական քրեական օրենսգրքի 220, 301, 314 եւ 318-րդ հոդվածներն ու ահաբեկչության դեմ պայքարի օրենքի 7-րդ կետը շարունակում են երկրում սահմանափակել խոսքի ազատությունը: Հետեւաբար թուրքական կառավարությունն անհապաղ պետք է վերանայի այս հոդվածների նպատակահարմարությունը:

Տես էջ 5

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Սոչիի հանդիպումն արձանագրեց դրական տեղաշարժ Ադրբեջանի դիրքորոշման մեջ

Նախագահ **Սերժ Սարգսյանի** երկօրյա պաշտոնական այցը Լատվիայի Հանրապետություն ավարտվեց երեկ երկրի վարչապետի, այնուհետեւ լատվիահայ համայնքի հետ հանդիպմամբ: Լեռային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցն առաջնային թեման էր ոչ միայն նախագահի եւ վարչապետի առանձնազրույցի, այլեւ լատվիահայ համայնքի հետ հանդիպման ժամանակ: Վարչապետ **Վալդիս Դոմբրովսկիսի** հարցին՝ ի՞նչ առաջընթաց կա Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առնչությամբ, նախագահն ասել է. «Եթե այս հարցը տվեր մեկ շաբաթ առաջ, ապա կասեի, որ որեւէ արդյունք, որեւէ դրական ելք չեմ ակնկալում: Բայց մարտի 5-ի Սոչիի հանդիպումից հետո կարելի է ասել, որ դրական տեղաշարժ կա ադրբեջանցիների դիրքորոշման մեջ: Եվ ես համարում եմ, որ մենք տեսանելի ապագայում կարող ենք հասնել որոշակի համաձայնությունների երեք՝ ուժի եւ սպառնալիքի չկիրառման, ազգերի ինքնորոշման եւ տարածքային ամբողջականության սկզբունքների շուրջը: Այդ սկզբունքներում համաձայնության գալուց հետո կարող է սկսվել բանակցությունների մի նոր փուլ, եւ այդ ժամանակ շատ հարցեր կմանրամասնվեն: Սկզբունքների շուրջը համաձայնության գալը դեռեւս սկիզբն է, դա ավարտ չէ»:

Փաստելով, որ հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ որեւէ նորություն չկա, նախագահ Սարգսյանն ընդգծեց, որ թուրքերը, ստորագրելով բանակցություններով ծնված արձանագրությունները, այնուհետեւ հրաժարվեցին արձանագրությունները վավերացնել խորհրդարանում՝ փորձելով նախապայմաններ առաջադրել: «Բայց մեզ համար որեւէ նախապայման ընդունելի չէ, մանավանդ այն, որ թուրքերն են փորձում առաջադրել՝ կապված Լեռնային Ղարաբաղի ու Ցեղասպանության խնդիրների հետ: Այս պահին խոսելիք եւ անելիք չունենք նրանց հետ: Շատերն ասում են, եթե այսպես էր լինելու, ինչո՞ւ նախաձեռնեցիք այս քաղաքականությունը: Ուզում եմ ասել, որ սա այն դեպքն է, երբ բացասական արդյունքն էլ է արդյունք: Շատ բարեկամներ մեզ մշտապես կշտամբում էին եւ ասում, որ չենք ուզում թուրքերի հետ հարաբերվել, որովհետեւ ղեկավարվում ենք միայն մեր ցավով, հույզերով, որ Ցեղասպանությունը մեզ կոմպլեքսավորել է, բարդույթներ հարուցել: Սակայն այժմ բոլորն էլ համոզվեցին, որ մեր հարաբերությունների բացակայության պատճառը մենք չենք: Չզիջելով մեր ազգային խնդիրներում նույնիսկ մեկ միլիմետր՝ մենք հասանք որոշակի արդյունքի», ասաց նախագահը:

«Պատրաստվեք պաշտպանելու մեր ազգային շահերը»

Հյուսիսային Փարիզում կամ Ռիգայում հայերի թիվն այնքան էլ մեծ չէ, ընդամենը 2500, սակայն դա չի խանգարում, որ նրանք ոչ միայն պահպանեն մշակույթն ու ավանդույթները, այլեւ հրաշալի կերպով դրանք մատուցեն լատվիացի ժողովրդին: Ռիգայի հենց կենտրոնում կա մի խաչքար, որ կանգնեցվել է 1989-ին՝ հայ համայնքի նախաձեռնությամբ ի հիշատակ Մեծ եղեռնի եւ Սպիտակի երկրաշարժի զոհերի: Միայն մայրաքաղաքում հայկական ռեստորանների թիվը գերազանցում է մի քանի տասնյակը՝ «Անի», «Արարատ», «Արցախ», «Երեբունի», «Կերտ»: Մոտավոր հաշվարկով յուրաքանչյուր 100 լատվիահայի բաժին է հասնում մեկ ռեստորան: Այս փաստը եւս մեկ անգամ ընդգծում է, որ լատվիահայ համայնքը բազմաշերտ է: Հայկական յուրաքանչյուր ռեստորանում հյուրերին ազգությամբ լատվիացի մատուցողները դիմավորում են «Բարեւ ձեզ»-ով եւ «Համեցեք»-ով:

Լատվիայում հայեր սկսել են բնակվել 1940-ականներից: Սկզբնական շրջանում համայնքը փոքրաթիվ էր ու անկազմակերպ: Միայն տասնամյակներ անց ստեղծվեց առաջին հասարակական կազմակերպությունը՝ Լատվիա-հայկական մշակութային ընկերությունը: Ռիգայի հայ համայնքը հիմնադրվել է 2001-ին վերոնշյալ ընկերության հիմքի վրա: Համայնքն անդամակցում է Լատվիայի ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների «Համագործակցություն» միությանը:

Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի» կրոնական կազմակերպությունը Ռիգայում գործում է 1993-ից: Կառուսալայի 6 հասցեում գտնվող եկեղեցին դարձել է լատվիահայերի երկրորդ տունը:

Այստեղ նրանք հավաքվում են, աղոթում ու փորձում օտար երկրում՝ եկեղեցու շուրջը համախմբված, պահպանել հայի կերպարն ու ոգին: Լատվիահայերն ընդգրկված են գրեթե բոլոր բնագավառներում, սակայն առավել ցայտուն է նրանց դերը հատկապես մշակույթի եւ արվեստի ոլորտներում: Ռիգայում գործող կիրակնօրյա դպրոցի նպատակն է երիտասարդ սերնդին մոտ պահել հայկական արմատներին: Դպրոցի գեղարվեստական տնօրեն **Հասմիկ Բոգգոսյանի** ներկայացմամբ, դպրոցում երիտասարդները սովորում են հայոց լեզու, գրականություն, հայոց եւ հայ առաքելական եկեղեցու պատմություն, երաժշտություն: «Դա օգնում է, որ երիտասարդները մնան համայնքում, հայրենիքից հեռու հասկանան ու գնահատեն նրա արժեքը», պատմում է նա: Լատվիայի խորհրդարանում գործող հայկական լոբբին արդեն տեւական ժամանակ աշխատում է Սեյմում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայտարարություն անցկացնելու ուղղությամբ:

Լատվիահայերը փաստում են, որ իրենք որպես ազգային փոքրամասնություն երբեւէ չեն նկատել խտրականություն: Միակ խնդիրը ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետեւանքների հաղթահարումն է. Պետությունն առայժմ չի կարողանում բացասական հետեւանքները վերացնել, մեծ թիվ է կազմում արտագաղթը: Գաղթողների մեջ քիչ չեն նաեւ հայերը: Հիմնական ուղղությունը՝ Անգլիա:

Լատվիահայերի հետ նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը Ռիգայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում էր, որը մեկնարկեց մատուցված սուրբ պատարագով: Կարեւորելով լատվիահայ համայնքի դերն ու բարձր գնահատելով նրանց հայրենասիրությունն ու համախմբվածությունը, նախագահ Սարգսյանը լատվիահայերին կոչ արեց սատար կանգնել հայրենի ժողովրդին: «Պատրաստվեք պաշտպանելու մեր ազգային շահերը: Պատրաստվեք մեզ սատար կանգնելու: Մեզ համար չափազանց կարեւոր է», այսպես ասաց նա:

Հայ-լատվիական գործարար ամուր կապեր

Հայաստանի եւ Լատվիայի նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Վալդիս Զատլերսի մասնակցությամբ Ռիգայում բացվեց հայ-լատվիական գործարար համաժողով: Նման համաժողով տեղի էր ունեցել Երեւանում 2009-ին նախագահ Զատլերսի Հայաստան կատարած պետական այցելության ժամանակ: Բարձր գնահատելով գործարար համաժողովը՝ էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանը**, «**Ազգ**»-ի հետ զրույցում ամփոփելով համաժողովի արդյունքները ընդգծեց, որ ձեռք են բերվել բազմաթիվ պայմանավորվածություններ: Հենց համաժողովի ընթացքում երկկողմ համաձայնագրեր են կնքվել զբոսաշրջության եւ մետալուրգիայի ոլորտներում: Նախարար Դավթյանը դա անվանում է լավ ու խոստումնալից հիմք հայ-լատվիական գործարար կապերի հաստատման համար:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռիգա-Երեւան

Հայ եկեղեցու ծիսական հարցերի հանձնախմբի 2-րդ հանդիպումը

Հայ եկեղեցու ծիսական հարցերի հանձնախումբը իր երկրորդ հանդիպումը մարտի 7-ին, Անթիլիասում ունեցավ՝ Ամենայն հայոց կաթողիկոսության կողմից Միխայել եպս. Աջապահյանի, Արշակ եպս. Խաչատրյանի եւ Վահան վրդ. Հովհաննիսյանի, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության կողմից Կոմիտաս արք. Օհանյանի, Գեղամ արք. Խաչատրյանի եւ Գրիգոր Ծ. վրդ. Չիֆթճյանի ներկայությամբ: Հանդիպման ընթացքում շարունակվեցին անցած տարվա օգոստոսին Ս. Էջմիածնում գումարված անդրանիկ ժողովի՝ Սբ Մկրտության խորհրդին վերաբերող հարցերի քննարկումները՝ միաձեւ բնագրի պատրաստության համար կենտրոնանալով բնագրերի եւ հնագույն ձեռագրերի համեմատական աշխատանքների վրա: Ընթացքում անդրադարձ եղավ նաեւ Սբ Մկրտության խորհրդի արարողությանն առնչվող կանոնական, խրատական, ուսուցողական եւ բարեպաշտական այլ հարցերի:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Կառավարությունը կմիջամտի գներին

Քարշր գնաճի դեպքում

«Առեւտրի եւ ծառայությունների մասին» եւ «Վարչական իրավախախտումների մասին» օրենքներում երեկ հաստատած փոփոխություններով, որոնք ուղարկվել են ԱԺ քննարկմանը, կառավարությունն իրավունք է վերապահում իրեն միջամտել որոշ ապրանքների գների կարգավորմանը: Ինչպես հայտնեց օրենքի նախագիծը ներկայացնող էկոնոմիկայի փոխնախարար **Արա Պետրոսյանը**, առեւտրի ոլորտում գնային քաղաքականության պետական կարգավորումը հնարավոր է այն դեպքում, եթե սոցիալական նշանակության առաջին անհրաժեշտության առանձին տեսակների պարենային ապրանքների մանրածախ գների աճը 30 օրացուցային օրերի ընթացքում կկազմի 30 եւ ավելի տոկոս: Այդ դեպքում կառավարությունն իրավունք ունի, այդ ապրանքների մանրածախ գների կայունացման նպատակով, դրանց վրա սահմանել թույլատրելի մանրածախ գների վերին շեմի կամ առեւտրային վերադիր չափ՝ ոչ ավելի, քան ինքնուն օրացուցային օր ժամկետով:

Անդրադառնալով այս որոշմանը՝ վարչապետ Տիգրան Սարգսյանն ասաց, որ նման իրավունքով օժտված են բազմաթիվ երկրների կառավարություններ, եւ դա որոշակի դեր է ունենում գների խուճապային աճ թույլ չտալու հարցում: Նա ընդգծեց, որ այս հնարավորությունից կառավարությունը պետք է օգտվի ծայրահեղ դեպքում:

Խոսքը հետեւյալ ապրանքատեսակների մասին է՝ տավարի միս, հավ, ձուկ, կաթ, կարագ, պանիր, ձու, կարտոֆիլ, սոխ, գազար, թեյ, ցորեն, բրինձ, հնդկաձավար, ցորենի ալյուր, արեւածաղկի ձեթ, մարգարին, շաքար, հաց, կերակրի աղ:

Ա. Մ.

ՄԻՊ-ը՝ ոստիկանապետին

Մարդու իրավունքների պաշտպանի մամուլի ծառայության հաղորդմամբ՝ ՄԻՊ **Կարեն Անդրեասյանը** մի գրություն է ուղարկել ոստիկանապետ Ալիկ Սարգսյանին, որտեղ ասվում է. «2011 թ. մարտի 3-ին ՄԻՊ գրասենյակը հաղորդում է ստացել ՀՀ կառավարության շենքի մոտ բացօթյա առեւտրի արգելքի դեմ բողոքող անձանց եւ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների կողմից խաղաղ ցույցի իրականացման ընթացքում մարդու իրավունքների խախտումների եւ ոստիկանների կողմից լիազորությունների վերազանցման վերաբերյալ: Հանրապետության հրապարակ են մեկնել ՀՀ ՄԻՊ Կարեն Անդրեասյանը եւ արագ արձագանքման խումբը: Նրանք չեն տեսել անօրինական որեւէ գործողության կատարում ո՛չ ոստիկանների եւ ո՛չ էլ քաղաքացիների կողմից: ԱԺ պատգամավորները տեղեկացրել են պաշտպանին, որ ոստիկանները խոչընդոտել են քաղաքացիների՝ խաղաղ ցույց անցկացնելու իրավունքի իրականացմանը, ավելին, ինչպես վկայում են պատգամավորները, բռնություն են կիրառել բողոքող քաղաքացիների եւ անձեռնմխելիություն ունեցող պատգամավորների նկատմամբ: Հայտնում ենք, որ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների կողմից պաշտպանին հասցեագրված բանավոր հաղորդման ընթացքում դեպքի վերաբերյալ այլ մանրամասներ չեն ներկայացվել, հետեւաբար պաշտպանը չի կարող տրամադրել ոստիկանությանը վերը նշվածից բացի այլ տվյալներ»: ՄԻՊ մամուլի ծառայությունը նաեւ հայտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանը ոստիկանապետին խնդրել է հետամուտ լինել տեղի ունեցած միջադեպի հանգամանքների լրիվ եւ բազմակողմանի վերհանմանը: Պաշտպանը մասնավորապես առաջարկել է քննության ընթացքում հաշվի առնել ոչ միայն ոստիկանների ցուցմունքները, այլեւ ականատեսների վկայությունները, հնարավորինս սեղմ ժամկետներում պարզաբանումներ տալ տեղի ունեցածի վերաբերյալ եւ տեղեկացնել քննության ընթացքի ու արդյունքների մասին:

«Ժառանգության» քաղխորհրդի ընդլայնված նիստ մարտի 13-ին

Մարտի 13-ին տեղի կունենա «Ժառանգություն» կուսակցության քաղխորհրդի ընդլայնված նիստ: Այս նիստում հավանաբար որոշում կկայացվի «Ժառանգության» եւ հատկապես նրա խորհրդարանական խմբակցության հետագա գործելակերպի վերաբերյալ, ընդ որում՝ «Ժառանգության» ղեկավարության ասելով, իրենք լրջորեն առաջարկներ են սպասում մարզերի ներկայացուցիչներից, տեղերից:

«Գերլուսին» մարտի 19-ին

Մարտի 19-ին Լուսինը կգտնվի Երկրից 356 577 կմ հեռավորության վրա: 1992 թվականից հետո Լուսնի ու Երկրի ամենամոտ հեռավորությունն այդ օրն է լինելու: Արդեն մամուլում հրապարակումներ կան, թե այդ երեւույթը Երկիր մոլորակի վրա առաջ կբերի բնական աղետներ ու ավերածություններ՝ երկրաշարժեր, փոթորիկներ, ջրհեղեղներ, ընդհանրապես, եղանակի ծայրահեղ դրսեւորումներ: Այդ օրը Լուսինը կլինի լիալուսնի փուլում ու մեզ կերեւա անսովոր մեծ չափով, ինչն էլ առիթ է տալիս կոչելու «Գերլուսին»: Լուսնի մերձեցման երեւույթը չարաշահումների առիթ է հատկապես աստղագուշակների համար: Սակայն աստղագետները համարում են, որ Լուսնի հեռավորությունը կապ չունի Երկրի վրա տեղի ունեցող տարերային աղետների հետ, ու եթե հատուկ ջանքեր գործադրենք, միշտ էլ հնարավոր է լուրաքանչյուր տարերային աղետին կապված որեւէ երկնային երեւույթ գտնելը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Մեկնաբանություն

Բանավեճեր ՀՈՒ կարգապահական կանոնագրքի շուրջը

Երեկ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովը կազմակերպել էր երկրորդ լսումները «Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի վերաբերյալ, որով օրենսդրորեն փորձ է արվում կարգավորել զինվորական կարգապահության, հրամանատար-զինծառայող հարաբերությունների դաշտը, ինչը մինչեւ այժմ կատարվում էր կառավարության (պաշտպանության նախարարության) որոշումներով: Սպասում կա, որ այս նախագիծը կօգնի նվազեցնելու բանակում ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքերի թիվը, ընդհանրապես կնպաստի բանակի առողջացմանը: Ոլորտի՝ մինչեւ այժմ օրենսդրորեն չկարգավորումը հանձնաժողովի նախագահ **Հայր Կարապետյանը** զարմանալի համարեց: Ըստ նախորդ լսումներից այս լսումների ժամանակահատվածում հնչած առաջարկներն ամբողջացնող ՊՆ իրավաբանական վարչության պետի տեղակալ **Սասուն Սիմոնյանի**՝ այդ առաջարկները վերաբերում են զինծառայողների բողոքարկման ընթացքի կարգավորմանը, հրամանատարների հրամանների սահմանափակումներին: Ընդհանրապես՝ օրենքի նախագծում սահմանվել են «զինվորական կարգապահություն» հասկացությունը, կարգապահության սկզբունքները, կարգապահության ապահովման գործընթացում հրամանատարների, ինչպես նաեւ ենթակա զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները, կարգապահական տույժերի եւ խրախուսման տեսակները, ինչպես նաեւ որպես նորամուծություն՝ «կարգապահական կալանք» կարգապահական տույժը հանվել է նախագծի գործող տեսքից, եւ նրա փոխարեն սահմանվել է «կարգապահական վաշտ» տույժի տեսակը: Օրենքի նախագիծը հստակ նախատեսում է կարգապահական տույժերը տալու եւ հանելու կարգերը, զինծառայողներին վերադաս հրամանատարների կողմից հրամաններ տալու սահմանափակումները: Զինծառայողներն իրավունք են ստանում որոշակի հանգամանքներում, հրաման տվողի լիազորությունների շրջանակից հրամանի դուրս լինելու պարագայում՝ վիճարկել տված հրամանը: Առանձին հոդվածով էլ սահմանվել է զինծառայողների կողմից դիմում բողոքներ, ինչպես նաեւ զեկուցագրեր ներկայացնելու կարգը եւ դրանց լուծման ընթացակարգը: ԵԱՀԿ փորձագետները առաջարկել են սահմանել այն կոնկրետ զանցանքները, որոնց համար կնախատեսվեն կոնկրետ տույժեր, առաջարկվում է նաեւ սահմանել այն հրամանատարների ցանկը, որոնք կոնկրետ տույժեր տալու իրավունք ունեն կոնկրետ զինծառայողների նկատմամբ, այժմ քննարկվում է առանձին հոդվածով դա օրենքի նախագծում արտացոլելը: Բողոքներ ներկայացնելու ընթացակարգերի սահմանումը նախատեսելիս դիտարկվում է նաեւ զինվորական օմբուդսմենին դիմելը, չնայած օրենքում զինվորական օմբուդսմեն հասկացությունը չկա (կա զինվորական հարցերով խորհրդական):

Պատգամավոր **Վահան Հովհաննիսյանը** ոչ մի կասկած չուներ, որ ժամանակն է ունենալու կարգապահական կանոնադրությունն օրենքի տեսքով, սա դրական ազդեցություն կունենա, բայց կասկած ուներ այն առումով , որ ՀՀ-ում բազմաթիվ հրաշալի օրենքներ ընդունվում ու չեն կատարվում: «Դեռ մի քանի տարի առաջ, երբ մեզ հարցնում էին, թե ո՞րն է ամենակայացած հասատությունը Հայաստանում, մենք, անկախ կուսակցական պատկանելությունից, առանց կասկածելու պատասխանում էինք՝ բանակը: Այսօր այդ հարցին միանշանակ պատասխանելը բարդ է, քանի որ բանակում էլ հայտնվել է արտոնյալ դաս, որին թույլատրված է խախտել օրենքները, կաշառքներ վերցնել, ստորացնել եւ նվաստացնել զինծառայողներին», ասաց նա: Պաշտպանության փոխնախարար **Արա Նազարյանից** լրագրողները հետաքրքրվեցին՝ այս կանոնագրքի ընդունմամբ հարցերը կլուծվե՞ն բանակում: Փոխնախարարը նկատեց, թե իրավական ակտ ընդունելով չէ միայն, պետք է կիրառվի, կիրառողը մենք բոլորս ենք՝ ե՛ւ զինված ուժերը, ե՛ւ հասարակությունը՝ բարձր իրավագիտակցությամբ քաղաքացիներ պետք է ունենանք:

Իսկ այսքան վիճահարույց դրույթներ ունեցող օրենքի ընդունումը նոր պրոբլեմներ չի՞ առաջացնի, հետաքրքրվեց «**Ազգը**»: Ա. Նազարյանը պատասխանեց, թե վեճերի ընթացքում է բացվելու ճշմարտությունը. լսումների ընթացքում հնչում էին մտահոգություններ առ այն, թե հրամանը չկատարելուց հետո մինչեւ բողոքարկման վերջ (մեկ ամիս) զինծառայողը պատժի մե՞ջ է լինելու, թե՞ ոչ, կամ հրաման չկատարելը արդյո՞ք վտանգներ չունի բանակի մարտունակության տեսակետից: Հրամաններն ի վերջո զինվորն իրավունք ունի՞ քննարկելու, թե պետք է անվերապահ կատարի. այս հարցի հետ կապված Ա. Նազարյանը թյուր մեկնաբանություն տեսավ նախագծի 18-րդ հոդվածի վերաբերյալ, որտեղ գրված է, որ չեն կարող տրվել օրենսդրությանն ու սահմանադրությանը հակասող հրամաններ: Սակայն տվյալ հոդվածը երկու մաս ունի, երկրորդ մասում գրված է, որ զինծառայողը պետք է շարժվի օրենքներով, հրամանը չկատարելն էլ քրեորեն դատապարտելի արարք է, այլ հարց է, որ դա համապատասխան զսպման մեխանիզմ լինի, իսկ ընդհանրապես՝ այդ հոդվածը վերանայման կարիք ունի:

Ինչպես տեսնում եք՝ նույնիսկ պաշտոնյաները դեռ միանշանակ պատասխաններ չունեն վիճելի հարցերի վերաբերյալ: Օրինակ՝ պաշտպանության նախկին փոխնախարար **Արթուր Աղաբեկյանը** համարում էր, որ զինված ուժերում ծառայող կազմից ամենաանպաշտպանը սպայական կազմն է, որեւէ օրենսդրական նախաձեռնություն պետք է բխի նրանից, որ ամրացվի սպայական կազմի դիրքերը: Նա բերում էր սպայակազմին թուլացնելու մի օրինակ. հրամանատարի ունեցած ամենահստակ լծակը զինվորին հաուպվախս ուղարկելն էր, հաուպվախսում նստելն էլ առաջ չէր դիտվել որպես ծառայության ժամկետ, իսկ այժմ զորամասի տարածքից հանել են (դեռ 1997 թվականից) հաուպվախսը եւ տեղափոխել ռազմական ոստիկանություն. «Եթե 10 հոգի զորամասից հաուպվախսում են, ու տվյալ զորամասը ստանում է մարտական հրաման, իսկ, ասենք, զորամասի գերազանց դիպուկահարը ինչ- որ խախտման համար կայազորային հաուպվախսում է, մինչդեռ կարող էր թշնամու առաջխաղացումը կասեցնել: Այսինքն՝ հաուպվախսը պետք է գտնվի զորամասի տարածքում եւ դիտվի մարտական պատրաստվածության էլեմենտ, իրականում հակառակն է: Կարգապահական վաշտը քողարկված կայազորային հաուպվախսն է իմ կարծիքով՝ մենք մեզ խաբո՞ւմ ենք, ի՞նչ կարգապահական վաշտ», ասում է նա: Մի խոսքով երեւում է, որ այս կանոնագիրքը մինչեւ ընդունվելը դեռ շատ բանավեճերով պետք է անցնի, որ համ մարդու իրավունքները բանակում պաշտպանված լինեն, համ բանակի մարտունակությունը դրանից չտուժի:

ՄԱՐԻԵՏԱ ԽՈՋԱՏՐՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Կանանց անվճար վիրահատական օգնության միամսյակը սկսվեց

Արդեն հինգերորդ տարին է, որ Երեւանի քաղաքապետի նախաձեռնությամբ մարտի 8-ից մինչեւ ապրիլի 7-ը Երեւանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնում անցկացվում է կանանց անվճար վիրահատական օգնության միամսյակ: «Քեզ համար, կանայք» խորագիրը կրող ակցիայի շրջանակներում կենտրոն դիմած հիվանդները անվճար բժշկական օգնություն են ստանում գինեկոլոգիական եւ վիրաբուժական ծառայությունների ուղղությամբ՝ բաց եւ էնդոսկոպիկ եղանակով:

Երեկ փոխքաղաքապետ Վանո Վարդանյանը, քաղաքապետարանի առողջապահության վարչության պետ Արմեն Ուլիխանյանը, «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ի տնօրեն Նիկոլայ Դալլաքյանը, ծննդատան վարիչ Ջենի Հովսեփյանը, բուժ. գծով փոխտնօրենի տեղակալ Լեւոն Գրիգորյանը, լրագրողների հետ շրջեցին ծննդատան նորաբաց բաժանմունքներում: Հիվանդասենյակները, վիրահատարանները ու ծնարանները կահավորված էին նորագույն սարքավորումներով եւ անհրաժեշտ պարագաներով:

Ինչպես նշեց պրն Ուլիխանյանը, «հաշվի առնելով նախորդ տարիների արդյունքները ու բազմաթիվ դիմումները, եղել է քաղաքապետ Կարեն Կարապետյանի հանձնարարականը ակցիան շարունակելու մասին»: Անցած չորս տարիների ընթացքում, ակցիայի շրջանակներում վիրահատվել է 552 կին, որոնցից 345-ը՝ Երեւանից, 207-ը՝ մարզերից: Այս տարի ակցիայում ընդգրկվել են նաեւ պոլիկլինիկաները, որպեսզի բնակիչները նախապես հետազոտվեն եւ արդեն ճշված ախտորոշմամբ ուղեգրվեն հիվանդանոց անվճար վիրահատվելու, որով էլ հնարավորություն կստեղծվի ավելի շատ կարիքավորների վիրահատական օգնություն ցուցաբերել: 2010 թ. միամսյակի շրջանակներում «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն էր դիմել 315 հիվանդ, որոնցից գինեկոլոգիական խնդիրներով վիրահատվել է 113-ը, իսկ 60-ը՝ վիրահատվել է վիրաբուժական տարբեր խնդիրներով, մնացած հիվանդները, դարձյալ անվճար հիմունքներով, ստացել են խորհրդատվություն: Վիրահատվածներից 120-ը եղել են Երեւանից, 53-ը՝ հանրապետության տարբեր մարզերից, Արցախից եւ մեկն էլ՝ ՌԴ-ից: Ակցիայի ծավալը 2010-ին կազմել է 26 միլիոն դրամ, տեղեկացրեց պրն Ուլիխանյանը:

«Ազգը» խնդրեց ԲԿ-ի ղեկավար Նիկոլայ Դալլաքյանին պարզաբանումներ տալ ընդունված հիվանդների եւ հատկապես հաճախակի նկատվող գինեկոլոգիական հիվանդությունների աճի մասին: Ակցիայի նյութական 2-րդ օրը արդեն ընդունվել են 6 հիվանդ եւ մեկին արդեն վիրահատել էին: Վիրահատված 41-ամյա Հասմիկ Մինասյանի մոտ եղել էր վառ արտահայտված ձվարանի պատռված կիստա, կպումներ, սրացված պրոցես: Տիկին Հասմիկը իր շնորհակալությունը խնդրեց փոխանցել ակցիայի կազմակերպիչներին, որոնց օգնությամբ անվճար վիրահատվել է: Իսկ թե ինչո՞ւ էր ձգձգել վիրահատությունը ու բարդություններ էին առաջացել «Ազգի» հարցին տվեց պարզ պատասխան. «Բազմիցս դիմել եմ տարբեր բուժհիմնարկների, ու բոլորը խոսքերը մեկ արած 180.000-200.000 դրամ էին ուզում: Որտեղի՞ց տայի, բա ինչպե՞ս արդեհնք...»: Պրն Դալլաքյանը նշեց, որ բացի այս 6 կանանցից, արդեն գինեկոլոգիական բաժանմունքում ընդունվել են եւս 5 կանայք եւ նման հիվանդների հոսքը սկսում է շատանալ: «Եթե վերլուծելու լինեմ, ապա մեծամասնությամբ մեզ դիմում են գինեկոլոգիական խնդիրներով՝ կապված արգանդի տարբեր փոփոխություններով: Ցավոք սրտի, մեզ հաճախ ուշացած են դիմում եւ մենք ստիպված ենք լինում հեռացնել այդ կարեւոր օրգանը: Վիրաբուժական բաժանմունք դիմողների մեծ մասը լեղապարկի խրոնիկ բորբոքումների հետ են կապված, կան նաեւ ճողվածքներ, խտիպով եւ այլն: Ուզում եմ շեշտել, որ կանացի ռեպրոդուկտիվ սիստեմայի հիվանդությունները բավականին մեծ զանգված են կազմում: Հայ կանայք անձնուրաց, նվիրված իրենց ընտանիքներին, իրենց առողջությանը չեն հետեւում եւ միշտ միայն վերջին պահին են դիմում բժշկի, որն էլ երբեմն բարդություններ առաջ է կանգնեցնում ե՛ւ հիվանդին ե՛ւ բուժող բժշկին: Նման հիվանդներին ակցիայի ընթացքում վիրահատում են: Ընդհանուր առմամբ մենք անվճար օգնություն ենք ցուցաբերում «Փարոսից» դուրս մնացած սոցիալական վաս վիճակում գտնվողներին, կարիքավորներին»:

Նշենք, որ մարտի 8-ին եւ 9-ին ծնվել են 4 մանչուկներ՝ 2 տղա, 2 աղջիկ: Երեք ծնունդը եղել է կեսարյան հատումով (ի դեպ, չորրորդ ծննդաբերությունն էր, չորսն էլ կեսարյանով) Մեջան Ամինենի երկու աղջնակների թիվը ավելացավ եւս մեկով: Նորածինը ընդամենը 2 կգ 850 կգ քաշով, 48 սմ հասակով իր առաջին ճիչը մեր ներկայությամբ արձակեց: Եվ փոքրիկը եւ մայրը հուսալի ձեռքերում են:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«Իրավիճակային լուծումները երբեւէ արդյունավետ չեն լինում»

Հայաստանում այս տարի գարու եւ եգիպտացորենի արտադրության զարգացմանն աջակցելու ուղղությամբ կառավարությունը 2 ծրագիր է ընդունել ու հատատել: Երեկ «Հայելի» ակումբում գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության ու բույսերի պաշտպանության վարչության պետ **Գագիկ Մանուչարյանը** տեղեկացրեց, որ ներկրվելու է 2025 տոննա գարնանացան գարու սերմացու եւ 63 տոննա եգիպտացորենի հիբրիդային սերմացու: Իսկ մյուս բանախոսը՝ տնտեսագիտության թեկնածու **Հրաչիկ Ջավադյանը**, որը նաեւ Պետական ագրարային համալսարանի ագրոբիզնեսի ու շուկայաբանության ֆակուլտետի դեկանն է, կարծում է, որ մարզերում մարդիկ տեղեկացված չեն, չգիտեն՝ ինչպիսի՞ն է լինելու ռիսկը, եթե չստանան համապատասխան արտադրանք. «Յուրաքանչյուր սորտ պետք է ենթարկվի փորձարկման ու հարմարվի կլիմայական պայմաններին: Առաջին հերթին փորձարկում է հարկավոր: Իրավիճակային լուծումները երբեւէ արդյունավետ չեն լինում»: Վերջինս նաեւ կարեւորեց ռազմավարական պաշարներ ունենալու հարցը, ինչն այսօր չունենք: Գագիկ Մանուչարյանը եւս անդրադարձավ հանրապետությունում չշրջանացված սորտեր բերելու հարցին եւ իր հերթին հատատեց. «Այո՛, իրոք բերում ենք չշրջանացված սորտ, եւ սա 2-րդ անգամն է, երբ կառավարությունը ստիպված է նման քայլի դիմել»:

Ինչ վերաբերում է գյուղմթերքների քանակացմանը, Հրաչիկ Ջավադյանը դրան եւս անդրադարձավ: Նրա փոխանցմամբ՝ գյուղատնտեսական մթերքների գներն համաշխարհային մասշտաբով արագորեն աճում են, ինչը պայմանավորված է նաեւ տվյալ արտադրության ծավալների կրճատումով: Խոսելով կարտոֆիլի թանկացումից՝ Հ. Ջավադյանը նշեց, որ նախորդ տարիներին նույնիսկ կարտոֆիլի գերարտադրություն ունեինք, եւ շուկայի չկարգավորման խնդիրը կարծես անդրադարձավ այսօրվա վիճակի վրա. «Մենք երկու տարի առաջ գիտեինք, որ հետագայում արտադրողը կարտոֆիլ արտադրելու մեջ շահագրգիռ չի լինելու: Ուստի մի կողմից կրճատվեցին կարտոֆիլի ցանքատարածությունները, մյուս կողմից՝ բնակլիմայական պայմանների պատճառով ընկավ բերքատվությունը»:

Ի. Պ.

Հ1. Ֆանֆաղաշտերի փոխարեն... ֆուտբոլի դաշտ

Իրավիճակներ կան, երբ մասնագիտական համերաշխությունն ստիպված ես մոռանալ

Ինչքան էլ փորձում եմ այս հեռուստաալիքի դիտող դառնալ, չի ստացվում: Այնպես որ եթե սոորեւ ներկայացվող մսորումներս ընթերցելուց հետո հեղինակիս ամբարիշտ հեռուստադիտող համարեք, կիամակերպվեմ այդ գնահատականին: Եվ այսպես՝ ծանոթացեք:

Մարտի 4-ին որոշեցի դիտել 21.00-ի լուրերի հիմնական թողարկումը: Ինչ-որ մի պահի մեկլսելու ու միաժամանակ դիտելու ցանկություն ունեցան 100 հազարավոր հայաստանաբնակներ ու, չեմ բացառում, միլիոնավոր հայեր սփյուռքում: Չէ որ անոնսում հաղորդվել էր, որ գյուղնախարարությունում զգալի ծրագրեր են մշակվել եւ վճռական են նախորդ տարվա բնակլիմայական անբարենպաստ եղանակի հետեւանքով ծագած խնդիրները or առաջ լուծելու առումով: Ակնկալվում էին բովանդակալից զրույց, տրամադրող նախարարական հաղորդումներ:

Մարտի 5-ի ժամը 15-ին միացնում եմ մեր հանրային համարվող ալիքը: Հաղորդումը սկսելու առաջին պահից հետաքրքրական սկիզբ եմ կանխատեսում՝ կարված կանաչ դաշտի ցուցադրման հետ: Մտածում եմ, որ ՀՀ գյուղնախարարի հետ զրույցի հեղինակները թեմայի մատուցման յուրօրինակ ձեւ են գտել, եւ մամուլում տպագրվող կարծիքը, թե Հ1-ում տնտեսական բնույթի հարցերի լիարժեք լուսաբանման ինչ-որ արգելք է դրված, հաղթահարվում է: Բայց այ թեզ բան. կանաչ դաշտը ֆուտբոլային է, հեռուսաընկերությունն էլ պատրաստվում է այս խաղի հայկական թիմերի հանդիպում ցուցադրել: Թեեւ ֆուտբոլի հարցում խնդիր չունեմ, այդ թվում՝ Հայաստանի թիմերի միջեւ ու մասնակցությամբ, սակայն որպեսզի անց տրամադրությունս փոխվում է. չէ՞ որ ՀՀ տնտեսության կարեւորագույն ոլորտներից մեկի նորանշանակ ղեկավարի խոսքին էի սպասում, ում գործողություններից են նաեւ կախված մեր երկրի պարենային ապահովությունն ու անվտանգությունը, հայաստանաբնակներիս կենցաղի բարելավման մի զգալի հատվածի դրական փոփոխությունը, 100 հազարավոր հայերի տունդարձի տրամադրություններ սկսվելը: Լավ, մտածում եմ, փորձեմ այս վիճակից ելք գտնել: «Եթեր» շաբաթաթերթի մշական գնորդս բացում եմ տվյալ օրվա էջն ու զանգահարում Հ1-ի շարքում նշված 65-00-15 հեռախոսահամարին: Խորխս ձայնով հեռախոսավարը հայտնում է, որ զանգահարել եմ Հայաստանի հանրային հեռուսաընկերություն եւ եթե գիտեմ պահանջվող ներքին համարը, անմիջապես հավաքեմ կամ սպասեմ հեռախոսավարուհու պատասխանին: Ներքին համարը չգիտեմ, ուստի սպասում եմ: Զանգը գնում է, բայց 5-6-րդ փորձերից հետո էլ լսափողը վերցնող չկա: Դիմում եմ մամուլում աշխատող ծանոթներից մեկին, առաջարկում է փորձել 65-37-51 համարը: Այստեղ հեռախոսը վերցրեցին, տեղեկացնելով, որ ՀՀ գյուղնախարարից տեղյակ են այնքանով, որ նա ժամը 2-ին մարզային այցելություն ունի, եւ լրացուցիչ հավելեցին՝ 65-00-15 նիշերից հետո անմիջապես 1-01 թվերը հավաքել: 1-2 անգամ զանգը կանոնավոր գնաց, սակայն կարգն ընդհատվում էր, իսկ հետագա զանգերս տու-տու-տու-երից հետո ավտոմատ անջատվում էին:

Կարծես վրդովվելու նշաններ եմ ցուցադրում, որը հարկավոր է ինչ-որ ձեւով հաղթահարել: Չէ՞ որ գործ ունես մի հեռուստալիքի հետ, թող որ այս աղքատիկ երկրի բյուջեից սնվող ու հանրային կոչվող, ուր հիմնականում հարգում են շոուներ կազմակերպողներին ու սիրողներին, հեռուստէկրանին նրանք պետք է հայտնվեն, քանզի սիրելի ու պաշտելի գովազդատուների արտադրանքը միայն նրանց արածի շնորհիվ է վաճառվում, հայաստանցիների ուշադրությանն արժանանում: ՀՀ տնտեսության վերաբերյալ նրանցից լավ որեւէ մեկը խոսել չի կարող, այդ թվում նաեւ նախորդ խոսացված ժամին հրավիրված նորին մեծություն նախարարը: Եվ խնդրեմ, ֆուտբոլ դիտեք, սա էլ կարելի է տնտեսական ոլորտ ներկայացնել, քանզի մերոնց արդեն առնում-ծախում են, մերոնք արտարժույթներ վաստակելով դրանից մասհանումներ են կատարում թանկարժեք տեխնիկա գնելով ու դրանք անապահով հայ ընտանիքներին նվիրելով խթանում են ներմուծումները, մեր երկրի ու բնակչության հարատեւության հիմնական երաշխիքը: Հայաստանաբնակներիցս գուցեեւ առավել են ՀՀ գյուղնախարարի խոսքին ու անելիքներին սպասում Հ1-ի սփյուռքի ունկնդիրները, տունդարձի ու գործարարության հույսեր փափագում, իրենց հայրենիի վաղվա օրը հազար ու բարգավաճ պետություն տեսնում:

Զվրդովվելու նպատակով վերցնում եմ «Եթեր» շաբաթաթերթի 28.02-06.03 օրերի համարն ու փորձում գտնել, թե երբ կկայանա «Զրույց»-ի կրկնությունը, որը սովորաբար լինում է ուշ ժամի. թեման անչափ հետաքրքրական է, եւ պատրաստ ես կեսգիշերից հետո էլ դիտել ու լսել: Տեղնուտեղը հիասթափությունս կրկնապատկվում է, քանզի կրկնություն նախատեսված չէ: Նայում եմ արդեն սացված «Եթեր»-ի 07.03-13.03 համարի սովորական շաբաթ օրվա հեռարձակումները, ուր 15.00-ին նշված է՝ «Զրույց», կրկնությունը 2.00-ին: Այն տրամադրությանն եմ տրվում, որ այդ օրվա զրուցակիցը հեռուստադիտողին առավել հետաքրքրող մեկն է լինելու, նախարարից բարձր պաշտոնյա կամ հիմնական ներմուծող, Հայաստան-Ռուսաստան ֆուտբոլային խաղում հակառակորդի դարպասին հաստատ գոլեր խոստացող կամ «Վիհիլիխ»-ի խմբագրակազմում չբացահայտված հայաստանյան ներկայացուցիչ:

Այնքան բան կա ասելու, բայց ում ինչ ասես: Մարդկանց ու պաշտոնյաների այդ տեսակի աշխատանքը շարքային հեռուստադիտողին անհասանելի ռեյտինգներով է չափվում, որին էլ նրանք ձգտում եւ իրականացնում են: Ինչ մնում է հարցին, թե ում ցանկությամբ կամ պահանջով է կատարվել վերոհիշյալ փոփոխությունը, կարելի է ենթադրություն անել. նախ՝ հեռուստաընկերության ղեկավարի, որն ամեն պարագայում պարտավոր է հարգել հեռուստադիտողին, ապաեւ՝ հնարավոր են ֆուտբոլի ֆեդերացիայի եւ ՀՀ գյուղնախարարի տարբերակները:

Իսկ հեռուստադիտողը կիամբերի, աշխարհի վերջը հո չէ: Գուցե զրույցի տեսագրությունն ինչ-որ մի ժամի թե հաջորդ օրերին հեռարձակվել է, որը դիտել չկարողանալու համար հեռուստադիտողների որոշակի խումբ իրարես ցավում է, քանզի այդկերպ Հ1-ի պարտադրված հեռուստադիտողը դառնալու ցանկություն պարզապես չունի:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Տունը կա, անունը չկա

Մի պայծառ օր ես՝ Ռուսաստանի քաղաքացիս, որոշեցի ընդունել երկքաղաքացիություն եւ նորեն երեք տասնամյակ հետո վերադառնալ արմատներիս: Երկքաղաքացի դառնալու արարողակարգը Հայաստանում բավականին դյուրացված է, ինչի կապակցությամբ ողջունում եմ համապատասխան իշխանությունների իմաստնությունը: Ահա եւ օրերս ձեռքս առա նվիրական հայատառ անձնագիրս... Մինչ այդ Ջորաղբյուրի ամառանոցային հատվածում գնել էի երկհարկանի մի տուն՝ կից հողամասով: Բնականաբար, ցանկություն հայտնեցի գրանցվելու ինձ պատկանող տանը, եւ ոչ թե համապատասխան խնդրանքով ընկնել բարեկամների դռները: Եվ հենց այստեղ իմ առջեւ հառնեցին բյուրոկրատական անհասկանալի ու անանց արգելքներ: Պարզվեց, որ իմ քարակուռ տունը, մասամբ էլ՝ տուֆակերտ, ընդամենը «բնակելի այգեշնակ» է: Ցիշտն ասած, ես բնավ էլ ուշադրություն չէի դարձրել այդ պարագային, մտածում էի՝ ինչ կարեւոր է, թե ինչպես է ձեւակերպված վկայականում: Աբովյանում ոստիկանության անձնագրային բաժնի պետը շատ կիրթ ձեւով ինձ բացատրեց, որ խորխս հրաման կա մարդկանց չգրանցել այգեշնակներում, եթե նույնիսկ դրանք բնակելի են: Խորհուրդ տվեց դիմել մարզային կադաստրին: Այստեղ էլ նույնքան բարեկրթորեն ասացին, որ իրենք իրավունք չունեն անհատական կարգով փոխելու այգեշնակների կարգավիճակը եւ դրանք դարձնելու գրանցման համար պիտանի բնակելի տներ: Դրա համար երկրի կառավարությունը պետք է ընդունի հատուկ (ընդհանուր) որոշում, հայտարարեցին նրանք: Ջանքերով ու ուրտ ցավով ձեռքերը տարածեց նաեւ Ջորաղբյուրի գյուղապետը, չմոռանալով իր բարոյական աջակցությունը հայտնել հարցի դրական լուծման գործում:

Խորությամբ մտորելով վերոշարադրյալի շուրջը, որոշեցի հայոց թանկագին կառավարությանը դիմել հայրենի «**Ազգ**» թերթի միջոցով, որի անխափան մոսկովյան թղթակիցն եմ ահա արդեն 15 տարի: Թախանձագին խնդրում եմ չզրկեք ինձ արդեն հարազատ դարձած ձորաղբյուրյան՝ բոլորովին վագոն չիհեցնող «բնակելի այգեշնակում» գրանցվելու հայրենասիրական խոր բավականությունից, հնարավորություն տվեք ինձ եւ անհիմաս բյուրոկրատիայից ծեծվող տարաբախտ այլ սփյուռքահայերի լիարժեք վայելելու անկախ Հայաստանի քաղաքացի լինելու անհուն բերկրանքը: Խնդրանքս ավելի ծանրակշիռ դարձնելու նկատառումով ինձ իրավունք եմ վերապահում միջնորդ դարձնել ուսանողական ընկերոջս՝ «**Ազգի**» գլխավոր խմբագրին , որը հյուրընկալվելով իմ «այգեշնակում», կարող է հավաստել կամ առնվազն վկայություն տալ, որ այն հիրավի ի զորու է կոչվելու «բնակելի տուն»՝ արժանի օրինական սեփականատիրոջը գրանցելու բաղձալի իրավունքին:

Սպասում եմ հուսադրող պատասխանի:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա-Ջորաղբյուր

Կին, որը եւ կա, եւ չկա

Միկիչյան Անահիտ Արհեսակի: Ըստ նկարում պատկերված կնոջ՝ այդպես է նրա անուն-ազգանունը: Նա 55 տարեկան է: Ողջ ձմեռ նրան կարելի էր տեսնել մի քանի վերարկուներով փաթաթված-նստած կառավարության թիվ 3 շենքի մոտակայքում, «Վերնիսաժին» մոտիկ կանգառում, իսկ գիշերում էր նա նշված տարածքին մերձակա շենքերի մուտքերում: Մյուս անտուների համեմատ՝ մեկ առավելություն ունի նա. մոտիկից դիտելով տեսնում ես, որ մաքուր է, այսինքն՝ ինքն իր խնամքով զբաղվում է, ու միայն ձեռքի ափերն են կեղտոտ: Այդ էլ բացատրեց՝ ինքը չի մուրում, իր աղրուսը վաստակում է, աղբամաններից շշեր է հավաքում-հանձնում, մակուլատուրա է հավաքում հիմնարկներից՝ էլի հանձնում, այդպես վաստակելով սնվելու փողը: Զրուցելիս թվում է ամեն ինչից տեղյակ, խելքը տեղը կին: Ասում է, որ բաղնիք է գնում, որ շշերը հանձնում է ոչ թե ընդունման կետ, այլ որոշակի մարդկանց եւ սահմանված գնից շատ ավելի էժան, քանի որ անձնական իրերը ձեռքին (վերարկուներ, այլ հագուստ, սրբիչ եւ այլն) չի կարող կտրել-հասնել շշերի կամ թղթի ընդունման կետ: Նրա պատմածներն իր կյանքի մասին ճշմարտանման են՝ տրամաբանություն եւ հետեւողականություն կա դրանց մեջ, սակայն երեւի վաղուց ինքն էլ չգիտե՝ ի՞նչն է ճիշտ պատմում, ի՞նչը լրացնում՝ որպես ստեղծագործական հավելում: Նրա խոսքից պարզ է դառնում, որ ծնունդով վանաձորցի է, մայրը հաշմանդամ է եղել, ինքը հայտնվել է տարբեր մանկատներում, եւ ինչ-որ պահի, իր խոսքով, անգամ բնակարան են հատկացրել Սեւան քաղաքում, Նալբանդյան 28, բն. 14 հասցեում: Մի խուճուճ պատմություն պատմեց, թե ոնց են այդ բնակարանը խաբել-ձեռքից վերցրել, ու նա 1989 թվականից առանց անձնագրի, առանց որեւէ տեղ գրանցման, առանց տանիքի՝ փողոցներում է: Երբեմն մոր բնակարանում է ապրել՝ Բյուրեղավանի 23 շենքի 41 հասցեում, հասցեները զարմանալիորեն հստակ հիշում էր (մոր անունն է Միկիչյան Օլգա): Սակայն ինչ- որ բազմաձալք խաբեությամբ այդ բնակարանից մայրն էլ է զրկվել եւ ինքն էլ զրկվել է գոնե մեկ-մեկ տանիք ունենալու հնարավորությունից: Իր նման մեկի հետ տարիներ ապրել է հանրակացարանում՝ որպես մարդ ու կին, հետո այդ մարդը բանտ է նստել, եւ ահա այս տարիուկեսը նա քնում է փողոցում ու ոչ մի օր տանիքի տակ չի եղել. «Սոցապ նախարարություն դիմում եմ՝ ներս չեն թողնում, կամ դիմումս ճղում են, ասում են՝ դու գնա, դատարան դիմի: Բա ես փող չունեմ դատարան դիմելու, որ մորս տունը վերադարձնեմ»:

Փաստորեն մարդը եւ կա, եւ չկա: Կա այս կինը՝ կապույտ աչքերով, մազերը սանրած-երկու կապ արած, ողջ ձմեռ վերարկուներով փաթաթված ու սոցապ գալստուկավոր նախարար-փոխնախարարի աչքի տակ կառավարության թիվ 3 շենքի «բորդյուրին» նստած, որոնք երեւի շենք մտնելիս գլուխներն այնպես են թեքում, որ աչքի մի ծայրով էլ չտեսնեն այս կնոջը ու անխռով, հոգի չպղտորած իրենց սոցիալական ծրագրերին հասնեն ու մեծ-մեծ իրականացնեն: Նաեւ՝ չկա այսպիսի կին՝ Ամահիտ Միկիչյան անունով, քանի որ ոչ մի տեղ այսպիսի մարդ չի նշված, ու մեծամեծ սոցիալական կառույցները, մեծամեծ բարեգործները, գրանտ լվացող մեծամեծ կանանց եւ իրավապաշտպան կազմակերպությունները «լայեղ» չեն անում այսպիսի մեկի սոցիալական խնդիրներով կամ իրավական պաշտպանությամբ զբաղվել:

ՄԱՔԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ.Գ. Չհամարձակվեք վարչական մեթոդներով էջել այս կնոջը ձեր պաշտոնական տեսադաշտից, հարգելի պաշտոնյաներ, մենք նրա ճակատագրին հետեւում ենք:

Ռուսաստանը միացավ Լիբիայի դեմ պատժամիջոցների կիրառման ՄԱԿ-ի որոշմանը

Դրան նպաստեց ԱՄՆ փոխնախագահ Բայդենի այցը Մոսկվա, որտեղ սակարկության առարկա է դարձել Վրաստանը

Փետրվարի երկրորդ կեսին Լիբիայում ծայր առած հակակառավարական ցույցերը համաժողովրդական շարժման կամ համատարած խռովության բնույթ չստացած հանկարծ վերածեցին քաղաքացիական պատերազմի: Որքան էլ տարօրինակ թվա, ցուցարարներին հաջողվեց ոչ միայն դիմագրավել, այլեւ արժանի հակահարված տալ կանոնավոր զորքերին: Թունիսի, Եգիպտոսի պարագայում օրինակելի զսպվածություն ցուցաբերող, «ժողովրդի ձայնին ականջ դնելու հորդորներով նախագահներին իշխանափոխության հարցում համոզող արեւմտյան տերությունները Լիբիայի դեպքում իսկույն կտրուկ միջոցներ ձեռնարկեցին:

Խոսքը լիբիայի դեմ պատժամիջոցներ կիրառելու ՄԱԿ-ի որոշման մասին է: Դրան հետեւեց ռազմական միջամտության հնարավորությունների բուռն քննարկումը: Մինչ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները համաշխարհային հասարակական կարծիք էին ձեւավորում Լիբիայի խաղաղ ցույցերը ռազմական ինքնաթիռներից ռմբակոծելու հետեւանքով հազարավոր ցուցարարների սպանության մասին, ՄԱԿ-ը մարդկության դեմ հանցագործություն կատարելու մեջ մեղադրում էր նախագահ Մուամմար Քադդաֆիին, լիբիական ընդդիմությունը, դիմելով արեւմտյան տերություններին, կոչ արեց ռմբակոծել գործող վարչակարգին հավատարիմ զորամիավորումների դիրքերը երկրում:

Այլ կերպ, աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները ստեղծեցին ռազմական միջամտության նախադրյալներ Լիբիայում, ՄԱԿ-ը՝ ի դեմ գլխավոր քարտուղար Բան Կի Մունի, նպաստեց, որ այդ միջամտությունը ցուցաբերի հետխորհրդային շրջանում մարդասիրական առաքելությունը գլխավոր առաջադրանքներից մեկը դարձրած ՆԱՏՕ-ն, օգտվելով Հարավսլավիայի եւ Աֆղանստանի փորձից: Իսկ լիբիական ընդդիմությունը, հրավիրելով Արեւմուտքին երկիր, նախապես հիմնավորեց ռազմական միջամտության անհրաժեշտությունը երկրում, օրինականացնելով միաժամանակ ԱՄՆ-ի գլխավորությամբ արեւմտյան տերություններին միջամտելու պատրաստակամությունը:

Երեկ ՆԱՏՕ-ի գագաթաժողովում քննարկվում էր Լիբիայում ռազմական միջամտության հարցը: Թեեւ հոդվածը պատրաստելու պահին քննարկումն ավարտված չէր, սակայն ենթադրելի է, որ միջամտության սկզբնական փուլում Լիբիայի տարածքը կհայտարարվի թռիչքազերծ գոտի, որպեսզի Քադդաֆիի ռազմաօդային ուժերը կաթվածահար վիճակում զրկվեն ընդդիմադիր ուժերի դիրքերը ռմբակոծելու համար օդ բարձրանալու հնարավորությունից, դառնալով այլապես ՆԱՏՕ-ի հարվածների թիրախ:

Այդ ընթացքում Ֆրանսիան երկրի ընդդիմությանը ճանաչեց որպես Լիբիայի օրինական իշխանություն: Հաղթահարվեց նաեւ Ռուսաստանի դիմադրությունը: Ինչպե՞ս, ամենայն հավանականությամբ, ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենի Մոսկվա կատարած երկօրյա այցով: Ինչպես հայտնի է, Ռուսաստանը ոչ միայն դեմ էր Լիբիայում ռազմական միջամտության որեւէ դրսեւորմանը, այլեւ կտրականապես մերժում էր նաեւ այդ երկրի դեմ պատժամիջոցների կիրառումը: Սակայն երեկ միացավ Լիբիայի դեմ ՄԱԿ-ի դեռեւս փետրվարի 26-ին սահմանած պատժամիջոցներին:

Ինչո՞վ դա բացատրել: Իհարկե, սակարկությամբ: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ հանդիպմանը, ինչպես նշում է թուրքական «Հյուրիեթը»՝ վկայակոչելով «Կոմերսանտին», փոխնախագահ Բայդենն առաջարկել է Վրաստանում զիջումների դիմաց աջակցել Ռուսաստանին Առեւտրի միջազգային կազմակերպությանն անդամակցելու հարցում, իսկ աջակցելու դիմաց պահանջել, որ Մոսկվան պաշտպանի Լիբիայի տարածքը՝ թռիչքազերծ գոտի հայտարարելու գաղափարը:

Թե ԱՄՆ-ն Վրաստանում ի՞նչ զիջումներ է ակնկալում Ռուսաստանից, չգիտենք: Բայց որ Լիբիայի դեմ ՄԱԿ-ի պատժամիջոցներին միացող Ռուսաստանը ողջամտորեն կոպաշտպանի նաեւ այդ երկիրը թռիչքազերծ գոտի հայտարարելու գաղափարը, թերեւս դրանով էլ կնպաստի, որ ռազմական միջամտության հարցում ճիշտ կողմնորոշվի ՆԱՏՕ-ի գագաթաժողովը, կասկած չի հարուցում:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Ֆրանսիան ճանաչեց Լիբիայի ԱԱԽ-ն եւ դեսպանատուն կբացի Բենգազիում

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին երեկ հայտարարել է, որ իր երկիրը Բենգազիում կազմավորված Ազգային անցումային խորհուրդը (ԱԱԽ) ճանաչում է որպես Լիբիայի ժողովրդի շահերը ներկայացնող միակ օրինական իշխանություն: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Այսպիսով, Փարիզը եվրոպական առաջին մայրաքաղաքն էր, որը հրաժարվում է ճանաչել Տրիպոլիի իշխանությունների օրինականությունը եւ խզում է կապերը Քադդաֆիի վարչակարգի հետ: Ավելի վաղ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման եւս հայտարարել էր այդ վարչակարգի օրինականության կորուստ մասին, բայց չէր ճանաչել Ազգային անցումային խորհուրդը որպես միակ օրինական իշխանություն:

Սարկոզին իր հայտարարությունն անելուց առաջ հանդիպել էր ԱԱԽ երկու ներկայացուցիչների հետ: Վերջիններս խնդրել էին, որ Եվրոմիությունը ճանաչի ԱԱԽ-ն եւ Լիբիան հայտարարի օդուժի համար թռիչքազերծ գոտի:

Սարկոզին նաեւ ասել է, որ Փարիզում վերաբացվում է Լիբիայի դեսպանատունը, սակայն՝ որպես ԱԱԽ ներկայացուցչություն, իսկ Ֆրանսիան դեսպանատուն կբացի Բենգազիում, մինչեւ որ հնարավոր լինի բացել Տրիպոլիում:

Ի դեպ, Տրիպոլիում գտնվող Քադդաֆին շարունակում է ապստամբներին անվանել դավաճաններ եւ լրտեսներ: Նա 500 հազար լիբիական դինար (410 հազար դոլար) պարգեւավճար է խոստացել ԱԱԽ ղեկավար Մուստաֆա Աբդել Ջալիլի գլխի դիմաց:

Շարունակելով նախագահ Սարկոզիի նախաձեռնությունը, Ֆրանսիայի արտգործնախարար Ալեն Ժյուպեն երեկ հայտարարել է, որ Եվրոմիությունը պետք է երկխոսություն սկսի Լիբիայի նոր ներկայացուցիչների հետ: Ժյուպեի խոսքերին արձագանքելով, Գերմանիայի արտգործնախարար Գվիդո Վեստերվելլեն ասել է, որ գնդապետ Քադդաֆին պետք է հեռանա: Այդ մասին հաղորդում է «Ֆիգարո» թերթի կայքը:

Տրամարակվեց Եվրոպայի խորհրդարանի զեկույցը Թուրքիայի վերաբերյալ

1-ին էջից

Լրագրողների վերջին ձերբակալությունների համար, որոնք «Էրգենեքոնի» գործին են առնչվում, զեկուցագիրը դատապարտել է Թուրքիային եւ մտահոգություն է հայտնել երկրում մամուլի ազատության ասպարեզում տիրող անմխիթար իրավիճակի առնչությամբ: Միաժամանակ ընտրությունների օրենքում բարեփոխումների անցկացման կոչ է արվել Թուրքիային, պահանջելով ազգային փոքրամասնությունների, էթնիկ եւ կրոնական խմբերի իրավունքների հետ հարգել նաեւ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներն ու այդ ասպարեզում Եվրոմիության ընդունված սկզբունքները:

Ինչպես երեւում է թուրքական մամուլի, առավել եւս «Եվրոնյուզի» թուրքերեն տարբերակ abhaber.com կայքի հրապարակումներից, Եվրոխորհրդարանի Թուրքիա-2011 թ. զեկուցագիրը առանձնակի նշանակությամբ անդրադարձել է Կիպրոսի հիմնախնդրին: Դրանով Եվրոխորհրդարանը Թուրքիայից պահանջել է զորքերն անհապաղ դուրս բերել Կիպրոսից եւ դադարեցնել կղզու հեսագա գաղութացումը՝ խուսափելով կղզին Թուրքիայի քաղաքացիներով բնակեցնելու գայթակղությունից, քանի որ դա էլ ավելի է խախտում Կիպրոսի ազգագրությունը:

Մարտի 10-ի նիստում կիպրացի եւ հունաստանցի խորհրդարանականները հանդես են եկել Թուրքիայում Քրդական հարցի լուծման եւ Հայոց ցեղասպանության ճանաչման առաջարկը զեկուցագրում ներառելու պահանջով, սակայն դա մերժվել է: Այդ ընթացքում անգլիացի խորհրդարանական Չարլզ Փենոքը, դատապարտելով Թուրքիային Իրանին ցուցաբերած աջակցության համար, պահանջել է, որ վերջինը բացի հայկական սահմանը, ինչպես նաեւ նավահանգիստները՝ Կիպրոսի Հանրապետության առջեւ:

Հ. Ջ.

ԵԳԻՊՏՈՍ

Շարմ էլ Շեյխի 2005 թ. պայթյունները Մուբարաքի գործն են

Լուրջ կասկածներ կան, որ Եգիպտոսը նախկին նախագահ Հոսնի Մուբարաքը եւ նրա որդի Գամալը մեղսակից են Շարմ էլ Շեյխի 2005 թ. պայթյուններին: Դրա վկայությունը Մուբարաքի տապալումից հետո ինտերնետում հայտնված փաստաթղթերն են, գրում է գերմանական Der Spiegel շաբաթաթերթը:

Փաստաթղթերից մեկում, օրինակ, նկարագրվում է ինչ-որ հանդիպում, որի մասնակիցները համաձայնեցրել են առողջավայրում նախապատրաստվող ահաբեկչության մանրամասնությունները՝ պայթուցիկներով մեքենաների թիվը, թիրախ հյուրանոցները եւ այլն:

Այդ փաստաթղթերը, դրանք հրապարակած մարդկանց պնդման համաձայն, պահվում էին անվտանգության պետական ծառայության շենքում եւ փրկվել են հրդեհի ժամանակ: Եգիպտացիներից շատերը կարծում են, որ գերատեսչության աշխատակիցները դիտավորյալ հրկիզել էին շենքը, որպեսզի ոչնչացնեն արխիվը:

Der Spiegel-ը նշում է, որ հրապարակված տասնյակ փաստաթղթերից մի քանիսը հավանաբար կեղծված են, բայց մյուսները միանգամայն հավաստի են:

Հրատարակությունը ընդգծում է, որ Եգիպտոսի անվտանգության ծառայությունը երկրի բնակչության մեջ խիստ վատահամբավ է: Եգիպտացիներն այն անվանում են «Մուբարաքի գեստապո», գտնելով, որ նախկին նախագահը գերատեսչությունն օգտագործել է սեփական նպատակներին հասնելու համար (այդ թվում՝ ուժային մեթոդներով):

2005-ի հունիսին Շարմ էլ Շեյխում տեղի ունեցած մի շարք պայթյուններից զոհվել էր 88 մարդ (եգիպտացիներ եւ օտարերկրացի զբոսաշրջիկներ): Ահաբեկչությունը ստանձնել էին «Ալ Ղաիդայի» բջիջներից մեկը եւ մինչ այդ անհայտ «Եգիպտոսի մոջահեդներ» խմբավորումը: 2005-ի օգոստոսին հաղորդվել էր, որ պայթյունների գործով ձերբակալվել է ավելի քան 3 մարդ: Մի քանի կասկածյալ սպանվել էր կալանավորման պահին:

Մարոկկոյի թագավորը խոստանում է «սահմանադրական բարեփոխում»

Մարոկկոյի Մոհամմեդ 6-րդ թագավորը ժողովրդին խոստացել է անցկացնել արմատական «սահմանադրական բարեփոխում»: Վերափոխումների հարցը դրվելու է հանրաքվեի, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:

Միապետի խոսքերով, սահմանադրության ուղղումների մշակման նպատակով կստեղծվի հատուկ հանձնաժողով: Ենթադրվում է, որ դրա առաջարկությունները թագավորին կներկայացվեն հունիսին, ապա կդրվեն հանրաքվեի:

Բարեփոխումներ անցկացնելու որոշմանը նախորդել էին ժողովրդի փետրվարյան ցույցերը, որոնց մասնակիցները պահանջում էին սահմանափակել թագավորի լիազորությունները եւ բողոքում էին սոցիալական անարդարության դեմ:

Ուղիղ եթերում հեռարձակված միապետի ելույթն առաջինն էր ժողովրդական հուզումներից հետո:

Փետրվարի 20-ին Մարոկկոյում անցկացված բողոքի ցույցերին մասնակցել էր մոտ 40 հազար մարդ: Խաղաղ ցույցերը վերածվել էին բախումների եւ անկարգությունների, որոնց ընթացքում զոհվել էին 6 եւ վիրավորվել հարյուրից ավելի անձնք:

Ամենահարուստը դարձյալ Կառլոս Սլիմն է

Միլիարդատերերի թվով Մոսկվան առաջինն է

Աշխարհի ֆինանսատնտեսական առաջատար հրատարակությունը՝ ամերիկյան «Ֆորբս» հանդեսը, հրապարակել է ամենահարուստ մարդկանց հերթական ցանկը: Ինչպես 2010-ին, այժմ եւս ցանկը գլխավորում է մեքսիկացի մեդիամագնատ Կառլոս Սլիմը, որի կարողությունը 53,5 միլիարդից հասել է 74 միլիարդ դոլարի:

Երկրորդ տեղում «Մայքրոսոֆթ» կորպորացիայի հիմնադիր Բիլ Գեյթսն է, որի ունեցվածքը փորձագետները գնահատում են 56 մլրդ դոլար: Գեյթսը անցյալ տարի եւս 2-րդ տեղում էր:

Երրորդ տեղը պահպանել է ամերիկացի հայտնի ֆինանսիստ եւ ներդնող Ուորեն Բաֆեթը: Նրա ներկայիս կարողությունը գնահատվում է 50 մլրդ դոլար:

Չորրորդ եւ հինգերորդ տեղերը զբաղեցնում են Բեռնար Առնոն (Ֆրանսիա, 41 մլրդ) եւ Լարրի Էլլիսոնը (ԱՄՆ, 39,5 մլրդ):

6-10-րդ տեղերում են Լակշմի Միտտալը (Հնդկաստան, 31,1 մլրդ), Ամանսիո Օրտեգան (Իսպանիա, 31 մլրդ), Էյկ Բաշիսան (Բրազիլիա, 30 մլրդ), Մուկեշ Ամբանին (Հնդկաստան, 27 մլրդ) եւ Քրիսի Ուոլտոնը (ԱՄՆ, 26,5 մլրդ):

Ամենահարուստ ռուսաստանցին Նովոլիպեցկի մետալուրգիական կոմբինատի տնօրենների խորհրդի նախագահ Վլադիմիր Լիսինն է, որը 24 մլրդ դոլարով զբաղեցնում է ցանկի 14-րդ տեղը: Ամենահարուստ իսրայելցի Սամի Օֆերը (10,3 մլրդ) զբաղեցնում է 79-րդ տեղը:

2011-ի ցանկում 2010-ի համեմատությամբ զգալիորեն ավելացել է միլիարդատերերի թիվը, 1011-ից հասնելով աննախադեպ 1210-ի:

Ըստ «Ֆորբսի» վարկանիշների, մինչեւ վերջերս 100-ից ավելի միլիարդատեր քաղաքացի ունեցող միակ երկիրը ԱՄՆ-ն էր: Այս տարի նրան միացել են Չինաստանը (115) եւ Ռուսաստանը (101):

Բնակչության մեջ ամենամեծ թվով միլիարդատերեր ունեցող քաղաքների շարքում առաջին տեղում Մոսկվան է (79), երկրորդում՝ Նյու Յորքը (58):

Ներկայացված է ՀՀ նախագահի 2010 թ. մրցանակի

Պոեզիայի վայելքով

Հրաչյա Թամրազյանը ժամանակակից հայ բանաստեղծության ականավոր դեմքերից է: Նրա ներկայությունը հաստատվում է նրանով, որ նա ոչ միայն օգտվում եւ վարպետորեն օգտագործում է, այլ նաեւ հարստացնում է մեր բանաստեղծական լեզվի եւ մտածողության հնարավորությունները, ընդլայնում է հայոց բանաստեղծության սահմանները՝ այնտեղ ներառելով նոր բառաբերտեր, նորանոր տոնայնություններ, ամենաբազմազան թեմաներ, բանաստեղծական պատկերի եւ պատկերավորության բոլորովին թարմ եւ արդիական ներարկումներ... Այս ամենի վրա դրված է բանաստեղծական միանգամայն ինքնատիպ մի նկարագրի կնիքը:

Հազվագյուտ բան բանաստեղծության մեջ, երբ առաջին տողից, առաջին ինտոնացիայից, առաջին պատկերից կարող ես ճանաչել բանաստեղծին: Գումարած եւս մի բացառիկ հատկություն. այս ամենը արտահայտված է նրբենագույն գծանկարով, գրաֆիկական անկրկնելի մատիտանկարով եւ, միաժամանակ, արդիականության, նրա թեմաների, մեր ժամանակների տագնապների եւ փլուզումների արտահայտման գեղեցիկ, ես կասեի՝ մի ներհայեցողական արտիստականությամբ, որտեղ ժամանակակից հայ բանաստեղծության մեջ նա իրեն հավասարը չունի:

2010 թ.-ին լույս տեսած «Բանաստեղծություններ, էսսեներ, գրական դիմանկարներ, հոդվածներ» ժողովածուն ամփոփում է հիմնականում Հրաչյա Թամրազյանի վերջին տարիների բանաստեղծությունները եւ գալիս է լրացնելու իր հեղինակի բանաստեղծական նկարագիրը: Ընդհանրապես Հրաչյա Թամրազյանը թեմաների եւ դրանց վարիացիաների բանաստեղծ է, մի բան, ինչը բանաստեղծական հարահոսություն եւ արտահին ստատիկություն է ենթադրում: (Այդպես է երաժշտության մեջ, օրինակ, Շոպենը): Այս իմաստով

ներկա ժողովածուում թամրազյանական բանաստեղծության հանհահորերի եւ բովերի մայրերակները նորանոր ճյուղավորումներ են տալիս, որոնցում պեղված նյութը այլ խորություններում է, այլ հարթություններում եւ այլ լուսավորման ներքո: Հարահոս, դաշնամուրային անընդհատ տարատեսակումների եւ զանազանակերպումների հոսք հիշեցնող բանաստեղծությունները, որոնք ողողված են որքան որ խաղաղ հայեցողության մթնոլորտով, նույնքան էլ հատու, ակտիվ դիրքորոշում ունեցող եւ պահանջող մի տեսակ խռովքի եւ տագնապի զգացողությամբ, իրենց ուղղվածություններով եւ պաթոսով հանդերձ՝ մեզ պահում են մի միջավայրում, որտեղ այդ ամենը իրագործվում է առաջին հերթին պոեզիայով եւ մեզ պահում է առաջին հերթին պոեզիայի վայելքի մեջ: Իրականությունը իր բոլոր արտահոսքերով եւ ճյուղավորումներով վերապրվելով՝ դառնում է ներքին փաստ եւ կենսագություն:

Իրականության
Արտացոլամներ,
Որոնք փոխվում են
Վայրկյանից արագ,
Ներսում է, սակայն,
Ողջն այդ խաղարկվում,
Հոգին դառնում է
Մարդ-նվագարան:

Հրաչյա Թամրազյանը նաեւ իր այս գրքում ոչ մի դեպքում պոեզիան միջոց չի դարձնում՝ այս կամ այն ասելիքը մեջտեղ հանելու, այս կամ այն գործառույթը իրականացնելու կամ գաղափարախոսությունը քարոզելու համար, այլ ամեն ինչ՝ հայեցումը, ապրումը, հույզը, միտքը, անգամ մեր ժամանակների ամենակարեւոր թեմաները մեջտեղ է բերում՝ պոեզիա սանալու եւ արարելու համար: Այս իմաստով, առանձնապես այսօրվա միտումների տակ կորչող բանաստեղծության պայմաններում Հրաչյա Թամրազյանի գիրքը բացառիկ երեւույթ է:

Գրքի՝ էսսեների, գրական դիմանկարների եւ հոդվածների բաժիններում հեղինակը մեզ տեսական մակարդակով բացահայտում է գրական իր դիրքորոշումները. դասական հեղինակների (Մայակովսկու, Պաստեռնակի, Եսենինի, Հր. Մաթեւոսյանի, Ա. Այվազյանի եւ այլոց) սեփական ընկալման կողքին իր ժամանակի եւ ժամանակակից գրականության հրատաղ հարցերն ու հիմնախնդիրները ապարեզ են հանվում գրողական նրբին դիտողականությամբ եւ շիտակությամբ: Հրաշալի է, երբ մեր իրականության եւ գրականության խնդիրները դիտարկվում են ոչ թե սոսկ իմացության «օբյեկտիվ» տրիզմայով, այլ նաեւ իբրեւ սեփական, անձնական խնդիրներ, իբրեւ սեփական կենսագրության հարցեր:

Ամեն բանաստեղծի չէ, ում տրված է սեփական «տարածքներ» տեսնելու կարողությունը, էլ չեմ ասում՝ դրանք լեզվով յուրացնելու եւ իրացնելու շնորհը: Եթե գրականության մեջ սերունդների եւ անհատների խնդիրը դեռեւս չնկատված, առավել եւս չմշակված եւ չյուրացված խորանների նվաճումն է, ապա Հրաչյա Թամրազյանը արդեն պատկառելի իր բանաստեղծական ժառանգությամբ եւ իր այս գրքով դա արել է: Հայ պոեզիայի անծայրածիր անդաստաններում արդեն կա մի տարածք, որը, բանաստեղծական իր ֆաունայով եւ ֆլորայով, նրա մշակածն է, նրա նվաճածն է, նրա սեփականությունն է: Գնալով դրա սահմանները ընդլայնվում են:

«Բանաստեղծություններ, էսսեներ, գրական դիմանկարներ, հոդվածներ» գիրքը մեզ այդ տարածության մեջ տանում է բյուրեղացած ապրումների, խորունկ խոհերի եւ մեր իրականության ամենախորքային իրողությունների վերապրումների:

ՀԱԿՈԲ ՄՈՎՍԵՍ

Noahs Ark Gallery-ի մասնակցությունը Մոնակոյի միջազգային ցուցահանդեսին

Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում Noahs Ark Gallery-ն (Նոյյան Տապան ցուցասրահ) շուրջ 20 տարվա պատմություն ունի. կազմակերպում է ցուցահանդեսներ՝ առավելաբար հայ եւ նախկին խորհրդային նկարիչների, զբաղվում է կերպարվեստի գործերի վաճառքով ու promotion-ով: Հիմնադիրն է արվեստաբան Մովսես Հերկելյանը, որ Հայաստանում գործող իր գործընկերների հետ վերջին տարիներին ուշադրությունը կենտրոնացրել է հայաստանյան արվեստագետների գործերի ներկայացման ու վաճառքի վրա: Մովսես Հերկելյանն այս ասպարեզ է մտել լրագրությամբ, Բեյրութի «Ազդակ» օրաթերթում կերպարվեստի վերաբերյալ հոդվածներով: Այժմ, ինչպես նա անձամբ բացատրում է ստորեւ հրատարակվող հարցազրույցում, աշխատակցում է կերպարվեստի միջազգային մի շարք հանդեսների: Նրա հիմնադրած ցուցասրահը հրավեր է ստացել այս տարի եւս մասնակցելու Մոնակոյի տարեկան միջազգային ցուցահանդեսին:

- Պրն. Հերկելեան, կրնա՞ք որոշ տեղեկութիւններ տալ Մոնակոյի 2011թ-ի արուեստի միջազգային ցուցահանդէսին ձեր ցուցասրահի մասնակցութեան մասին:

- Քաջալերուելով 2011թ-ի Մոնակոյի Յատուկ թողարկում (Special Edition) միջազգային ցուցահանդէսին մեր արձանագրած նիւթա-բարոյական յաջողութիւններէն՝ այս տարի եւս որոշեցինք մասնակցիլ Մոնակօ 11 միջազգային ցուցահանդէսին: Բաւական լայն կաղմ ստեղծեցինք հրատարակութիւններու հետ, որոնցմէ ամենէն նշանակալիցը Լիւքս Իմմօ (Luxe Immo) արուեստի հրատարակութիւնն է: Արուեստի այս ամսաթերթը ունի 18700 մասնագէտ-բաժանորդներ (արուեստաբաններ, արուեստագէտներ, ճարտարապետներ): Կը տարածուի աշխարհի 123 երկիրներու 370 քաղաքներու մէջ ու կը հրատարակուի 4 լեզուներով (անգլերէն, ֆրանսերէն, իսպաներէն եւ ռուսերէն): Անոր ընթերցողներուն ընդհանուր թիւը կը գնահատուի 2.5 միլիոն: Այնտեղ հրատարակուած յօդուածներէս վերջինը Մոնակոյի նախորդ ցուցահանդէսի մեր տաղաւարի մասին է: Luxe-ի մէջ պիտի ներկայացնեմ առաւելաբար հայ եւ ռուս արուեստագէտներ: Նախկին Խ. Միութեան արուեստը ամսագրի ընթերցողները աւելի կը հետաքրքրէ, իբրեւ նորութիւն միջազգային արուեստի մէջ: Բացառուած չէ, որ գրեմ նաեւ օսար արուեստագէտներու մասին: Պատուէր մը արդէն ունիմ ճէյն Սեյմուրէն:



- Անցեալ տարուան Մոնակոյի հռչակաւոր ցուցահանդէսին՝ Noahs Ark-ը եւ հայկական կերպարուեստը մեծ յաջողութեան հասան յատկապէս Վահրամ Դաւթեանի ստեղծագործութիւններուն պատճառով, որոնք արժանացան բարձր գնահատանքի եւ աննախընթաց գինով վաճառուեցան: Ինչպէ՞ս կը բացատրէք այս երեւոյթը:

- Այո, անցեալ տարուան Յատուկ թողարկում ցուցահանդէսին արդիւնքները իսկապէս փայլուն էին: Մեզի հանդէպ ցուցաբերուած հետաքրքրութեան եւ գնահատման գլխաւոր պատճառն այն էր, որ նախկին Խ. Միութենէն եկած կերպարուեստը թէ՛ որակ եւ թէ՛ նորութիւն կը պարունակէ իր մէջ, իսկ այդ նորութիւնը անհեթեթի (absurd) ուժգին դրսեւորումն է, որ կու գայ խորհրդային կացութածեւի անտրամաբանական դրութենէն: Թէեւ անհեթեթը գոյութիւն ունէր գեղարպաշտ արուեստին մէջ ալ, սակայն այդքան ուժգին չէր արտայայտուած:

Հայ կերպարուեստը մրցունակ է միջազգային գեղի վրայ: Մենք թէ՛ որակ ու թէ՛ քանակ ունինք: Ըսածս չի վերաբերիր միայն անոնց, որոնք Noahs Ark-ը կը՛ներկայացնեն: Ուրիշներ ալ կան, բայց անոնց համապատասխան շուկայ չունինք: Շուկայ չըլլալու պատճառն այն է, որ մենք չենք կազմակերպուած եւ չունինք ազգային մշակութային քաղաքականութիւն: Իսկ մշակման գործին հարկ է որ Սփիւռքի մասնագէտները եւս մասնակցին: Իբրեւ ազգ եւ պետութիւն՝ ամէն բանէ աւելի հոգ ենք մշակութաքէս: Այո՛, մրցունակ ենք մեր մշակոյթով: Պէտք է ուժ տանք մշակոյթին: Noahs Ark-ին հրագործումը լուսայ մըն է այս բոլորին մէջ: Ուրիշներ ալ կրնան հայկական մշակոյթը միջազգային գեղի վրայ լաւագոյն ներկայացնել, եթէ յանդգնութիւնը ունենան իրենց վարկը ու նիւթական կարողականութիւնը ռիսքի ենթարկելու: Ռոֆելը կըսէր. Ոչինչ ռիսքի ենթարկողը, ոչինչ կը շահի:

- Որքէս արուեստաբան Luxe Immo-էն առաջ կ՚աշխատակցէիք Ամերիկայի Fine Arts-ին, Բէյրութի Monday Morning-ին եւ այլ թերթերու, ամսագրերու...

- Իրականութեան մէջ Luxe Immo-ի խմբագրատեսը, Դէյվիդ Դիւբուա, զիս գտաւ Նիւ Եորքի մէջ հրատարակուող Fine Arts-ի միջոցով, որ կը՛ տարածուի ամբողջ աշխարհի մէջ ու միջազգային ցուցահանդէսներուն կը բաժնուի: Յոն է որ Դիւբուա կարդացած էր Վահրամ Դաւթեանի մասին յօդուածս: 2002թ-էն սկսեալ, Նիւ Եորքի Art Expo-ին կը մասնակցինք եւ մեզի հետ հարցազրոյցներ կունենան Art world News-ի, Art Business News-ի եւ նմանօրինակ այլ հրատարակութիւններ: Fine Arts-ի խմբագրատեսը եւս՝ Վիկտոր Կորբս, ցանկացաւ հարցազրոյց մը ունենալ հետս՝ Խ. Միութեան ապստրակտարպաշտ արուեստի մասին: Այս նիւթին շուրջ քիչ մը զրուցելէ ետք, ան առաջարկեց առանձին յօդուած գրել Վահրամ Դաւթեանի մասին: Յօդուածս յատուկ գնահատանքի արժանացաւ, որմէ ետք պայմանագիր կնքեցինք շարունակելու աշխատակցութիւնս:

- Հայ կերպարուեստի, գեղանկարչութեան ներկայացումը Մոնակոյի նման միջազգային ցուցահանդէսներու մէջ՝ ի՞նչպիսի ապագայ կը՛խոստանայ:

- Ամէն ինչ կախեալ է մեր կազմակերպուածութենէն: Եթէ մենք չկազմակերպուինք՝ չենք կրնար արդիւնքներու հասնիլ, նուաճումներ արձանագրել: Իբրեւ սկիզբ՝ շատ գեղեցիկ եւ արդիւնաւէտ եղաւ Սփիւռքի նախարարութեան կազմակերպած հայ կերպարուեստի գործիչներու համա-հայկական խորհրդաժողովը: Այդ ուղղութեամբ Սփիւռքի նախարարութիւնը աշխատանքներ կը տանի որպէսզի կազմակերպէ երկրորդը, աւելի ընդարձակը, ուր յատուկ որոշումներ առնուին ու կազմուի հայ արուեստագէտներու միութիւն մը: Խմբուինք հայրենիքի շուրջ, որպէսզի գործակցաբար կարողանանք զարգացնել թէ՛ հայրենի եւ թէ՛ Սփիւռքի մշակոյթը: Եւ ինչու չէ՝ մշակոյթը օգտագործենք նաեւ քաղաքականութեան եւ տնտեսութեան մէջ: Այսինքն՝ մեր ազգային վարկը բարձրացնենք, ամրապնդենք մշակոյթի ճամբով:

Հարցազրոյց վարեց՝
ՀԱՄՕ ՄՈՍԿՈՓԵԱՆ
Բէյրութ

Թարգմանություն. անցում այլ աշխարհներ

Լիլիթ Գրիգորյանը Երեւանում դասավանդել է ֆրանսերեն, եղել է ուղեվար-թարգմանիչ, Ֆրանսիայի դեսպանության մշակութային կցորդ: Բոդլերի եւ ռուսական սիմվոլիստական պոեզիայի մասնագետ է: Այդ մասին տեղեկացնում է Փարիզի «Աշխարհ» թերթը: Վերջին տարիներին հայերեն է թարգմանել ֆրանսիական գրականության երեք կարեւոր ստեղծագործություն՝ Ալֆրեդ դը Մյուսսեի «Մարիաննի խմայքները» (լույս է տեսել 2008-ին), որը Հայաստանի տարվա շրջանակներում Երեւանում բեմադրել է Սերժ Ավետիքյանը, Ժյուլիեն Գրակի «Նեղ ջրերը» (2008) եւ Սամուել Բեկեթի «Գոդոյին սպասելիս» գործը (2009): Վերջին երկուսի նախաբանները գրել են նշանավոր մասնագետներ Ժան-Լուի Լյոտրան եւ Միշել Կորվենը:

Ժ. Գրակի «Նեղ ջրերի» տեքստը կարճ է, բայց երկարահունդ արտահայտություններով ծավալվում է մի աշխարհում, որտեղ երազանքներն ու պատկերները միախառնվում են, հարափոփոխ բանաստեղծական մտածողություն կազմելով նրբագեղ ու բարդ լեզվով: Ս. Բեկեթի պիեսի արտահայտությունները, ընդհակառակը, կարճ են, լի հեգնանքով եւ թվացյալ հիմարություններով, որպեսզի արտահայտեն ապարդյուն սպասումը եւ գոյության ունայնությունը: Երկու դեպքում էլ (ինչպես որ ամեն մի թարգմանության մեջ) դժվարությունը նախադասության ռիթմի պահպանումն է, որպեսզի ընթերցողը հեղինակի աշխարհում հայտնվի գեղեցիկ թարգմանված տեքստի շնորհիվ:

Այդ երկու ստեղծագործությունները լույս են տեսել Actual Art ֆրանսերեն-հայերեն երկլեզվյան տարբերակով, «գրպանի գիրք» ֆորմատով, խնամված տեսքով, մատչելի գնով (100 դրամ): Հրատարակչությունը Մկրտիչ Մաթեւոսյանի գլխավորությամբ իրականացնում է մշակութային բազմաբնույթ գործունեություն, մասնավորապես՝ փոխանակումներ տեսողական արվեստների, արվեստի քննադատության էսսեի, պոեզիայի, արձակի բնագավառներում: «Ժամանակակից ֆրանսալեզու գրականություն» մատենաշարը աստիճանաբար ընդլայնվում է, ներկայացնելով մի շարք հայտնի գործեր: Ի դեպ, Մ. Մաթեւոսյանը զգալի դեր է խաղացել 2010-ի հոկտեմբերին Երեւանում «Վերադարձ գրքին» նշանաբանով անցկացված ընթերցանության օրերի կազմակերպման մեջ: Նա այնտեղ ներկայացնում է 5 հրատարակություն, այդ թվում Ս. Բեկեթի «Գոդոյին սպասելիս», Ժան Էլնոզի «Ռավել», Միշել Մարյանի «Հայկական տաբու» գործերը: Ընթերցանության օրերի նպատակն էր գրքի հանդեպ հետաքրքրությունը վերսին Հայաստանում, որտեղ վերջին երկու տասնամյակին այն զգալիորեն նվազել է:

Ի դեպ, հայկական տպագրության 500-ամյակի առիթով ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2012-ին Երեւանը կհռչակի գրքի համաշխարհային մայրաքաղաք:

Պ. Ք.

Վլադիմիր Ենգիբարյանին արժանին մատուցվեց

Բռնցքամարտի դպրոցն օլիմպիական չեմպիոնի անվամբ

Շուրջ մեկ շաբաթ է, ինչ տիկնոջ հետ Երեւանում է գտնվում հայ փառաբանված բռնցքամարտիկ, 1956-ի Մելբուռնի օլիմպիադայի չեմպիոն Վլադիմիր Ենգիբարյանը: Նրանց հյուրընկալել էր ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը Վլադիմիր Ենգիբարյանին պարգեւատրելով ազգային օլիմպիական կոմիտեի շքանշանով: Նա նաեւ խոստացել էր հանրաճանաչ բռնցքամարտիկի հիմնադրած պատանի բռնցքամարտիկների մարզադպրոցն անվանակոչել Վլադիմիր Ենգիբարյանի անվամբ: ՀԱՕԿ-ի նախագահը նաեւ առաջարկել էր հաջորդ տարի Երեւանում մեծ շուքով ու հանդիսությամբ նշել Վլադիմիր Ենգիբարյանի ծննդյան 80-ամյա հոբելյանը:

Եվ ահա երեկ Վլադիմիր Ենգիբարյանի, նրա տիկնոջ՝ Քնարիկի մասնակցությամբ տեղի ունեցավ դպրոցի անվանակոչման հանդիսավոր արարողությունը: 1959-ին փառաբանված մեր բռնցքամարտիկի հիմնած մարզադպրոցն այսուհետեւ կոչվելու է Վլադիմիր Ենգիբարյանի անվամբ: Բացման խոսքում ՀԱՕԿ-ի նախագահ **Գագիկ Ծառուկյանը** մասնավորապես նշեց. «Այսօր շատ ուրախալի օր է, որը կապված է մեր հարգարժան օլիմպիական չեմպիոն Վլադիմիր Ենգիբարյանի անվան հետ: Նա հայկական սպորտի կենդանի լեգենդ է, մեծ ներդրում ունի բռնցքամարտի զարգացման գործում: Այսօր մենք արժանին ենք մատուցում նրան՝ իր հիմնադրած մարզադպրոցն անվանակոչելով Ենգիբարյանի անվամբ, նաեւ թանգարան ենք ստեղծում: Նման մարզիկները մեր ազգի պարծանքն են, օրինակ են ծառայում մատաղ սերնդի համար: Առողջություն եւ հաջողություն եմ մաղթում Վլադիմիր Ենգիբարյանին եւ իր տիկնոջը: Նաեւ հավատում եմ հաջորդ տարի եւս այցելելու հայրենիք, որտեղ մեծ շուքով կնշենք մեր անվանի բռնցքամարտիկի ծննդյան 80-ամյակը»:

Վլադիմիր Ենգիբարյանն իր շնորհակալությունը հայտնեց Գագիկ Ծառուկյանից, նշելով, որ իր երազանքն իրականացավ ու դարձյալ ընկերներով միասին են: Տիկին **Քնարիկն** էլ հեռեւյալը նշեց. «Այսօր մի հրաշալի, բաղձալի, երջանիկ օր է բոլորիս, հատկապես մեր ընտանիքի համար: Մեր պատահական այցը հայրենիք «ոսկեջրվեց» շատ հարգարժան Գագիկ Ծառուկյանի շնորհիվ: Շատ շնորհակալ եմ, որ իր թանկարժեք ժամանակից տրամադրեց այս միջոցառումը կազմակերպելու համար ու դպրոցն անվանակոչեց հիմնադրի անունով»:

«Բանանցը» կիսաեզրափակիչի ուղեգրի լուրջ հայտ ներկայացրեց

Երեք հանդիպումներով երեկ մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի գավաթի 20-րդ խաղարկությունը: Խփվեց 6 գոլ, որոնցից երեքը գրանցվեցին «Բանանց»-«Գանձասար» խաղում: «Բանանցի» մարզադպրոցի արհեստական խոտածածկով խաղադաշտում կայացած այդ խաղում դաշտի տերերը կիսաեզրափակիչի ուղեգրի լուրջ հայտ ներկայացրին՝ 3 անպատասխան գնդակ խփելով կապանցիների դարպասը: Առդեն 6-րդ րոպեին Խաչատուր Ավետիսյանը բացեց հաշիվը: Ընդմիջումից հետո Նորայր Գյոզալյանն ու Բեսոն եւս 2 գոլ խփեցին:

Բավական հետաքրքրական մրցավեճ էր ծավալվել Իջեւանում Գյումրիի «Շիրակի» եւ «Փյունիկի» միջեւ: Չեմպիոնի կազմում վնասվածքի պատճառով բացակայում էր Մարկոսը, իսկ ահա «Շիրակում» նորամուտը նշեց «Բանանցի» պաշտպան Հովհաննես Գրիգորյանը:

Շիրակցիները բավական հաջող էին գործում թիկունքում ու դիմում էին վտանգավոր հակագրոհների: Դրանցից մեկի ժամանակ էլ 33-րդ րոպեին Անդրանիկ Բարիկյանը բացեց հաշիվը: Առաջին խաղակեսում փյունիկցիներին այդպես էլ չհաջողվեց լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին:

Ընդմիջումից հետո վճռորոշ եղավ Շիրակցի Արմեն Տիգրանյանի հեռացումը: Ընդամենը 7 րոպեում մրցավարը նրան 2 անգամ դեղին քարտ ցույց տվեց ու հեռացրեց դաշտից: Մնալով 10 հոգով, «Շիրակը» շարունակում էր դիմակայել «Փյունիկի» հուսահատ գրոհներին, վստահ էր խաղում դարպասապահ Լոգվինովը: Թվում էր, թե «Շիրակը» խաղը կհասցնի հաղթական ավարտի, սակայն խաղավարտից 4 րոպե առաջ «Փյունիկին» փրկեց թիմի ավագ Սարգիս Հովսեփյանը: Աջ եզրով առաջ շարժվելով, Հովսեփյանը դիպուկ հարվածով գրավեց դարպասը: Խաղավերջում Շիրակցի Կարեն Ալեքսանյանը նոպաստավոր դիրքից վրիպեց, իսկ Սարգիս Հովսեփյանի հարվածից հետո «Շիրակին» օգնության եկավ դարպասածողը:

Ինչպես տեղեկացանք «Շիրակ» ակումբից, այսօր ակումբի ղեկավարությունը պատրաստվում է դիմել ՀՖՖ, որպեսզի Արմեն Տիգրանյանին մրցավար Մանուկ Ֆահրադյանի ցույց տված կարմիր քարտը չեղյալ համարվի:

«Հրազդան» մարզադաշտում մրցեցին «Ուլիսն» ու «Արարատը»: Խաղն անցավ ուլիսցիների որոշ առավելությամբ, որոնք մի քանի գոլային պահեր ստեղծեցին: Մասնավորապես Արսյոմ Ադամյանի հարվածը դիպավ դարպասի հորիզոնական ձողին, իսկ Ալբերտ Թադեւոսյանի եւ Շոթա Ջիքիայի հարվածները հետ մղեց «Արարատի» դարպասապահ Ալեքսանդր Պետուխովը: Արարատցիները հիմնականում պաշտպանվում էին՝ դիմելով հակագրոհների, որոնք առանձնակի վտանգ չէին ներկայացնում: Միակ դիպուկ հարվածն «Ուլիսի» դարպասին կատարվեց 45-րդ րոպեին: Վլադիմիր Մալկովը հետ մղեց Կարեն Ավոյանի հարվածը:

«Ուլիսին» ի վերջո հաջողվեց կորզել հաղթանակը: 76-րդ րոպեին հսկողությունից դուրս մնացած Արսյոմ Ադամյանը գրավեց Պետուխովի դարպասը: Նշենք, որ «Ուլիսի» ֆուտբոլիստների գործողություններն այս խաղում ղեկավարում էր Արթուր Ասոյանը, քանի որ գլխավոր մարզիչ Սեւադա Արզումանյանը Լոնդոնում մասնակցում է մարզչական սեմինարի:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

Արթուր Ասոյան («Ուլիս»)-Խաղը կարելի է բավարար գնահատել, հաշվի առնելով, որ մրցաշրջանի մեկնարկում լարվածությունը մեծ է: Մեր ֆուտբոլիստների վրա ազդեց դաշտի փոփոխությունը: Պարապմունքներն անցկացնում ենք Մասիսի խաղադաշտում: Դրա հետեւանքով էլ այսօր ֆուտբոլիստները չկարողացան արագ գործել: Զգացնել տվեց նաեւ մեր գլխավոր մարզչի բացակայությունը: Խաղային օղակները լավ էին համագործակցում: Շնորհավորում եմ տղաներին հաղթանակի առթիվ: Կարեւոր էր, որ մրցաշրջանը հաղթանակով սկսեցինք:

Արկադի Անդրեասյան («Արարատ»)-Ընդհանուր առմամբ վատ չխաղացինք, թեեւ չհաջողվեց կատարել խնդիրը՝ դարպասն անառիկ պահել: Կարելի է ասել, որ այսօր մարզական բախտը մրցակցի կողմն էր: Մենք բավարար ուժեր ունենք, սակայն հարձակման գծում վառ արտահայտված հարձակվող չունենք, որոնք ֆուտբոլիստների անհատական վարպետությունն էլ բարձր չէ: Աշխատանք է տարվում թիմը կազմավորելու, խաղը կարգավորելու հարցում: Այսօր ծրագրել էինք մեկ հարձակվողով խաղալ: Եվ քանի որ Արա Հովհաննիսյանն ավելի արագաշարժ է, ուստի Գեւորգ Կարապետյանին չէինք հայտավորել:

Այսօր կկայանա քառորդ եզրափակիչի վերջին՝ «Միկա»-«Իմպուլս» հանդիպումը: Պատասխան խաղերը կկայանան մարտի 14-15-ին:

ՇԱԽՄԱՏ

Քոթանջյանը գրավեց 31-րդ տեղը

Իրանի Մեշհեդ քաղաքում ավարտվեց շախմատի միջազգային մրցաշարը, որի 230 մասնակիցների թվում էր Տիգրան Քոթանջյանը: Վերջինս հաջող մեկնարկից հետո զգալիորեն թուլացրեց տեմպերը եւ 11 հնարավորից վաստակած 7 միավորով գրավեց 31-րդ տեղը: Ավարտական տուրում Տիգրանը պարտվեց իրանցի Ամիրեզա Պուրամեզանալիին:

8 շախմատիստներ վաստակեցին առավելագույն՝ 8,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով մրցաշարի հաղթող ճանաչվեց Հոլանդիան ներկայացնող Սերգեյ Տիվյակովը: 2-րդ եւ 3-րդ մրցանակակիրներ դարձան ռուսաստանցի Եվգենի Գլեյզերովը եւ վրացի Դավիթ Բենիաշեն:

Անհաջող մեկնարկ

Ռեյկյավիկում մեկնարկել է շախմատի միջազգային հերթական մրցաշարը, որի 164 մասնակիցների թվում է բրազիլահայ գրոսմայստեր Գրիգոր Սեւակ Մխիթարյանը: Շվեյցարական մրցակարգով կանցկացվի 9 տուր: Հաղթողը կպարգեւատրվի 5000 դոլարով: 2-րդ մրցանակակիրը կստանա 3000 դոլար, 3-րդը՝ 1800: Ընդհանուր առմամբ դրամական պարգեւների կարժանանան 10 լավագույն շախմատիստները:

Մխիթարյանն անհաջող մեկնարկեց՝ սեւերով պարտություն կրելով Ֆրանկ Ռեհֆելդտից:

Ծանրորդները նախապատրաստվում են Ծաղկաձորում

Ծանրամարտի տղամարդկանց հավաքականը երեկվանից Ծաղկաձորում ուսումնամարզական հավաք է սկսել՝ նախապատրաստվելով ապրիլին Կազանում կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Պողոս Պողոսյանը հավաքի է հրավիրել 8 ծանրորդի: Մինչեւ մարտի 24-ը կայանալիք հավաքին մասնակցում են Սմբատ Մարգարյանը (56 կգ), Սամվել Գրիգորյանը (69), Վանիկ Ավետիսյանը (69 կգ), Արայիկ Միրզոյանը (77 կգ), Աղասի Աղասյանը (77 կգ), Էդգար Գեւորգյանը (85 կգ), Գեւորգ Պողոսյանը (94 կգ) եւ Արթուր Բաբայանը (105 կգ):

Մեր մյուս առաջատար ծանրորդները՝ աշխարհի չեմպիոն Տիգրան Գ. Մարտիրոսյանը, աշխարհի փոխչեմպիոն Առաքել Միրզոյանը, Արա Խաչատրյանն ու Ռուբեն Ալեքսանյանն իրենց անձնական մարզիչների հետ շարունակում են նախապատրաստությունը նոյեմբերին Փարիզում կայանալիք ծանրամարտի աշխարհի առաջնությանը:

Անգլիական արգելափակոց «Միլանի» առջեւ

Հայտնի դարձան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչի եւս 2 մասնակիցներ: Պատվավոր մրցանակի համար պայքարը կշարունակեն անգլիական «Տոտենհեմն» ու գերմանական «Շալկե-04»-ը:

«Տոտենհեմը» դեռեւս Միլանում կայացած առաջին խաղում էր հաջորդ փուլի ուղեգրի լուրջ հայտ ներկայացրել՝ հաղթելով 1-0 հաշվով: Այդ խաղում «Միլանի» խաղացող Զենարո Գատուզոն հարձակվել էր «Տոտենհեմի» մարզչի վրա, որի համար որակազրկվել էր ու պատասխան հանդիպմանը չէր մասնակցում: «Տոտենհեմի» ֆուտբոլիստներին հաջողվեց դարպասն անառիկ պահել ու հասնել ցանկալի արդյունքի:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Հարի Ռեդնապ («Տոտենհեմ»)-Դժվարին աշխատանք կատարեցինք: Տեսաք, թե ինչպիսի թիմ էր մեզ դիմակայում: Դժվար էր ճեղքել «Միլանի» պաշտպանությունը, որը բավական ակտիվ էր գործում հարձակման գծում: Մեր թիմում աչքի էր ընկնում բրազիլացի Սանդրոն: «Տոտենհեմը» գերազանց խաղաց միջին գծում, հուսալի գործեց պաշտպանությունում եւ հասավ ցանկալի արդյունքի:

Մասիմիլիանո Ալեգրի («Միլան») - Իհարկե, ցանկանում էինք քառորդ եզրափակիչ մտնել, սակայն դա մեզ չհաջողվեց: Մեզ համար ճակատագրական եղավ առաջին խաղում թույլ տված սխալը: Պատասխան խաղում իմ սաներն ամեն ինչ արեցին հաղթելու համար, ճնշում գործադրեցին մրցակցի դարպասին: Սակայն գրոհների ավարտական փուլում մեզ չբավականացրեց դիպուկությունը: Ամեն դեպքում, չեմպիոնների լիգայում անհրաժեշտ փորձ ձեռք բերեցինք, որը մեզ օգտակար կլինի Իտալիայի առաջնությունում:

«Շալկե-04»-ի ֆուտբոլիստները սեփական հարկի տակ 3-1 հաշվով հաղթեցին «Վալենսիային»: Առաջին խաղում գրանցվել էր ոչ ոքի՝ 1-1: Հանդիպումն անհաջող սկսվեց դաշտի տերերի համար, որոնք 17-րդ րոպեին Ռիկարդու Կոշտայի հարվածից հետո հայտնվեցին հետաքոնդողի դերում: Բայց հետագայում 2 անգամ Ֆարֆանը, մեկ անգամ էլ Գավրանովիչը գրավեցին «Վալենսիայի» դարպասը:

Մարզիչների կարծիքը հետեւյալն է:

Ֆելիքս Մագաս («Շալկե-04») - Կարծում եմ, որ առաջին խաղի արդյունքը մեզ մի փոքր կաշկանդում էր: Այնքան էլ ագրեսիվ չէինք, ինչը հնարավորություն ընձեռեց հյուրերին կարգավորելու իրենց խաղը եւ հաշվի մեջ առաջ անցնելու: Միայն 3-րդ գոլը խփելուց հետո վերջապես հանգիստ շունչ քաշեցինք:

Ունաի Էմերի («Վալենսիա») - Շատ հիասթափված եմ: Հաշվի մեջ առաջ անցնելով, հետագայում ձեռքից բաց թողեցինք հաղթանակը: Ընդմիջումից հետո դաշտի տերերը հաշվի մեջ առաջ անցան, որից հետո մենք գոլային 4 պահ չիրացրինք: Հարկ է նշել մրցակցի դարպասապահի հիանալի խաղը:

1/8 եզրափակիչի պատասխան մյուս 2 խաղերը կկայանան մարտի 15-ին: Կմրցեն «Բավարիան» եւ «Ինտերը», «Մանչեսթր Յունայթեդն» ու «Մարսելը»:

«Ռեալը» Կակային տրանսֆերի է հանել

Մադրիդի «Ռեալի» ղեկավարությունը որոշել է տրանսֆերի հանել թիմի բրազիլացի կիսապաշտպան Կակային: Նրա խաղից մարզիչները դժգոհ են: Ուստի հունիսին «Ռեալը» կփորձի վաճառել Կակային: Սակայն խնդիրն այն է, որ Կական բավական բարձր է վարձատրվում՝ տարեկան 9 մլն եվրո: Չհաշված նաեւ այն, որ «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսի վրա Կակայի տեղափոխությունը 60 մլն եվրո էր նստել: Բրազիլացի ֆուտբոլիստը դեռեւս 4 տարվա պայմանագիր ունի արքայական ակումբի հետ:Կական ցանկանում է վերադառնալ «Միլան»: Վերջինիս նախագահ Սիլվիո Բեռլուսկոնին եւս դեմ չէ ֆուտբոլիստի վերադարձին: Սակայն նա հասկանում է, որ դա այնքան էլ դյուրին խնդիր չէ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Ադրբեջանին մաքրազործող մա՞հ

Շտապել են դատապարտել 9-ամյա երեխայի մահը, երբ դա «հաստատման» կարիք ունի առնվազն ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների համար

Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ խնդրի լուծումը կարեւորելը սրբազան պարտի նման մի բան է դարձել, անկախ այն ամենից, թե այդ լուծմանը հասնելու համար ինչ է արվում եւ ինչպես: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները նույն այդ նպատակին հասնելուն նպաստելու մտադրությամբ են, ըստ իրենց, հաճախ «մաֆոֆում» տարածաշրջանի մի երկրից մյուսը, երբեմն էլ, երբ «եղանակային պայմանները» ներում են, այցելում են Ստեփանակերտ, թեեւ առողջ տրամաբանությունը հուշում է, որ հենց այստեղ պետք է ուղղված լինեն իրավիճակը կարգավորելու բոլոր ջանքերը:

Նույն այդ նպատակին են, ավելի հեռահար ժամանակահատվածի կտրվածքով, ուղղված նաեւ շփման գծի դիտարկումները, որոնցից հերթականն իրականացվել է երեկ, եւ ինչպես միշտ՝ «առանց որեւէ միջադեպի»: Ամեն անգամ դիտարկում են ու ամեն անգամ «առանց միջադեպերի» իրավիճակ արձանագրում, մինչդեռ միջադեպեր տեղի են ունենում հաճախակի, իսկ հրադադարի խախտումներ՝ գրեթե ամեն ժամ: Ընդ որում, երբեմն այդ ամենն ավարտվում է զոհերով, սակայն յուրաքանչյուր այդպիսի իրավիճակում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները բավարարվում են մտահոգություն հայտնելով:

Վերջին մարտյան հայտարարությամբ համանախագահները, ի շարունակումն Սոչիի նախագահական համատեղ հայտարարության, խոսեցին հետաքննություն անցկացնելու կարեւորության ու հրատապության մասին: Հայկական կողմն, ի դեմս Հայաստանի ԱԳՆ մամուլի քարտուղար **Տիգրան Բալայանի**, արդեն իսկ հայտարարել է, որ Հայաստանը ողջունում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այդ նախաձեռնությունը: Ըստ Բալայանի, Հայաստանը եւ Ղարաբաղը բազմիցս դրական են արձագանքել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, ԵԱՀԿ գործող նախագահների կոչերին շփման գծից դիտարկահարների դուրսբերման վերաբերյալ, ինչը թույլ կտա խուսափել նմանատիպ միջադեպերից եւ բարենպաստ մթնոլորտ ստեղծել հիմնախնդրի կարգավորման գործընթացում:

Սրան անմիջապես արձագանքել է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարությամբ, թե «դիտարկահարներին շփման գծից հեռացնելու ցանկություն ունեցող պետությունը չէր սպանի 9-ամյա երեխային»: Եվ այսպիսի հայտարարություն է անում այն պետությունը, որի պարագայում նախ դեռեւս ապացուցման կարիք ունի «9-ամյա երեխայի սպանության» մասին տեղեկությունը, եւ երկրորդ, այդ երկրի պաշտոնյաներն են անհետքեթության ասպիճանի շաս ու հաճախակի կրկնում պատերազմ վերսկսելու մասին:

«**Ազգն**» արդեն տեղեկացրել է, որ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակից հերքել են երեխայի սպանության լուրը, իսկ Հայաստանի պաշտպանության նախարարությունն էլ հայտարարել է, որ երեխայի կյանքի շահարկումը ամոթալի է: Սակայն, պարզվում է, Ադրբեջանի համար ամեն մի քայլ ընդունելի է, միայն թե դրանով հերթական փորձն արվի վարկաբեկելու, վնասելու Հայաստանին:

Սակայն այս դեպքում արտառոցը Ադրբեջանի կեցվածքը չէ, որին քաջածանոթ ենք, այլ՝ Ադրբեջանին հավասարվածներինը: Այն ժամանակ, երբ հենց Միացյալ նահանգները ներկայացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահը մյուսների հետ միասին հայտարարում է, որ պետք է հետաքննություն անցկացվի ու բացահայտվեն մարտին տեղի ունեցած միջադեպերը, «եթե դրանք հաստատվեն», ադրբեջանական «1news.az»-ի տեղեկացմամբ, այդ երկրում ԱՄՆ դեսպանության մամուլի քարտուղար **Կիտ Բինը** իբր հայտարարում է, թե իրենք դատապարտում են «շփման գծին բռնության գործողությունները, իսկ այս միջադեպը (նկատի ունի «երեխայի սպանությունը» - Ա.Հ.) վկայում է հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության մասին»:

Մեկը հարցնող լինի, նախ, որտե՞ղ էր ԱՄՆ դեսպանությունը բազմաթիվ այն խախտումների ժամանակ, երբ ադրբեջանական սադրանքների զոհ էին դառնում հայ զինվորները: Բացի դրանից, ինչո՞ւ է ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչն իր վրա նման առաքելություն վերցրել, երբ դեռ չի ապացուցվել, որ ադրբեջանական կողմի տարածած այդ տեղեկությունը ինչ կարգի լուր է: «Երեխայի սպանությունը» շտապել է նաեւ դատապարտել Բաքվում գտնվող Ալբանիայի ԱԳ նախարարը՝ առանց երկար-բարակ մտածելու:

Եվ եթե հավատալու լինենք ադրբեջանական լրահոսին, ապա ցնցված լինելու մասին են հայտարարել նաեւ ԵԱՀԿ դիտարկումն իրականացրած Իմրե Պալատինուսը, Ուիլյամ Պրայորը եւ Ժասլան Նուրտազինը: Նշելով, թե դիտարկման ընթացքում կխոսեն երեխայի ծնողների հետ, ԵԱՀԿ դիտարկում իրականացնողները եւս շտապել են արձագանքել մի երեւույթի, որի լինելիությունը հերքել է ղարաբաղյան պաշտպանության բանակը:

Այնպիսի մի ժամանակահատվածում, երբ միջազգային հանրությունը եւ իրավապաշտպան կազմակերպությունները դատապարտում ու քննադատում են Ադրբեջանում տիրող իրավիճակը, խոսքի ազատության բիրտ սահմանափակումները ու դրան աղերսներ ունեցող զարգացումների բացակայությունը, ցավոք, հարմար միջոց է ընտրվել երեխայի մահը՝ ոչ միայն շեղելու ուշադրությունը եւ հանրության համար թիվ 1 խնդիր ձեւավորելու, այլեւ բազմաթիվ սադրանքներ իրականացրած երկիրն աշխարհին «զոհ» ներկայացնելու առումով:

Ինչ վերաբերում է վերը նշված արձագանքներին, ապա առնվազն տարօրինակ է, որ որեւէ երկիր կամ կազմակերպություն դատապարտելի խոսքեր է ասում ի պաշտպանություն Ադրբեջանի, որի կողմից ցանկության բացակայությունն է պատճառը, որ դիտարկահարները դեռեւս մնում են շփման գծում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ո՞ւմ կրակոցից է զոհվել ադրբեջանցի երեխան

Ադրբեջանի կառավարող կուսակցության ներկայացուցիչ, խորհրդարանի պատգամավոր եւ քաղաքագետ Մուբարիզ Գուրբանլին միջազգային հանրությանը կոչ է արել «դատապարտել ադրբեջանցի 9-ամյա երեխայի սպանության մեղավորներին»: Այդ խնդրով Հայաստանի իշխանություններին հղած նամակ է տարածել Ղրիմի ադրբեջանական համայնքի ղեկավար Ռահիմ Հումբաթովը:

Հիշեցնենք. ըստ ադրբեջանական կողմի, մարտի 8-ին Աղդամի շրջանի Օրթա Գարվենդ գյուղի բնակիչ 9-ամյա Ֆարիզ Բաղալովն «սպանվել է Հայաստանի զորքերի կողմից հրադադարի խախտման հետեւանքով»: Աղդամի շրջանի դատախազ Իսմայիլ Գասիմովի բառերով, «Ֆարիզ Բաղալովը ժամը 17-18-ի սահմաններում գլխից վիրավորվել է Հայաստանի զինված ուժերի կողմից օկուպացված Շիխլար գյուղի ուղղությունից արձակած կրակոցով, երբ խաղալիս է եղել իրենց տան բակում»:

Նույն «փաստի» առթիվ Ադրբեջանի պաշտպանության նախարարության խոսնակ Էլդար Սաբիրօղլուն ասել է, որ «ժամը 16:58-ին հայ դիտարկահարի կրակոցից սպանվել է Օրթա Գարվանդ գյուղի բնակիչ Ֆարիզ Արիֆ օղլու Բաղալովը»:

Ֆարիզ Բաղալովը քաղաքացիական անձ էր, երեխա: Եվ, բնականաբար, նրա «սպանության» հանգամանքներին քաղաքացիական իշխանություններն ավելի քաջատեղյակ պիտի լինեին, քան՝ զինվորականները: Իսկ այս դեպքում Աղդամի շրջանի դատախազը նշել է, որ դեպքը «տեղի է ունեցել ժամը 17-18-ի սահմաններում, Բաղալովը վիրավորվել է գլխից, երբ խաղալիս է եղել իրենց տան բակում», մինչդեռ զինվորական գերատեսչության մամլո խոսնակը նշում է «դեպքի» ստույգ ժամ՝ 16:58 եւ որեւէ խոսք չի ասում Ֆարիզ Բաղալովի վիրավորվելու մասին: Դատախազն անորոշ խոսում է «Շիխլար գյուղի ուղղությունից արձակած կրակոցի», իսկ ՊՆ ներկայացուցիչը՝ «հայ դիտարկահարի կրակոցի» մասին:

Ակնհայտ է, որ դատախազության նախնական տեղեկությունը ՊՆ մամլո ծառայությունում ենթարկվել է «անհրաժեշտ ուղղումների»: Բայց, ինչպես միշտ, Ադրբեջանի պաշտպանական գերատեսչությունը դա արել է ապաշնորհ ձեւով:

Բանն այն է, որ Աղդամի շրջանի դատախազը լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում ասել է, որ «Ֆարիզ Բաղալովը վիրավորվել է գլխից, տեղափոխվել հիվանդանոց, սակայն նրա կյանքը փրկել չի հաջողվել»: Պաշտպանության նախարարության խոսնակը, սակայն, ասում է, որ «Ֆարիզ Բաղալովն սպանվել է», ինչից պետք է ենթադրել, որ «երեխայի մահը վրա է հասել անմիջապես»:

Սաբիրօղլուն ռազմական գերատեսչության ներկայացուցիչ է եւ հասկանում է, որ պարզապես անիմաստություն է ասելը, թե «հայ դիտարկահարի կրակոցից» 9-ամյա երեխան «գլխից վիրավորվել է, տեղափոխվել հիվանդանոց, բայց նրա կյանքը փրկել չի հաջողվել», որովհետեւ բոլորն էլ գիտեն, որ դիտարկահար զենքի հարվածային ուժն ավելի մեծ է, եւ նրա կրակոցից շաս հաճախ անգամ սաղավարտով պաշտպանված զինվորներն են տեղնուտեղը զոհվում, երբ խոցվում են գլխից: 9-ամյա երեխան, այո, դիտարկահարի կրակոցից կսպանվեր վայրկենապես:

Բայց չէ՞ որ Աղդամի շրջանի դատախազը ասել է, որ երեխան տեղափոխվել է հիվանդանոց, սակայն չի հաջողվել փրկել նրա կյանքը: Դրանից հետեւում է, որ երեխան հիվանդանոց է հասցվել դեռեւս կենդանի, բժիշկները պայքարել են նրա կյանքի համար, սակայն փրկել չեն կարողացել: Դա նշանակում է, որ Ֆարիզ Բաղալովը դիտարկահարի կրակոցի զոհ չէ, որ դարձել է: Նա պարզապես գլխի շրջանում հրազենային վերք է ստացել, որի հետեւանքով էլ մահացել է:

Հրազենային կրակոցի փոխարեն օգտագործելով «հայ դիտարկահարի կրակոց» արտահայտությունը, Ադրբեջանի ՊՆ-ի մամլո խոսնակը հետաքնդել է եւս մեկ նպատակ՝ ցույց տալ, որ «Ֆարիզ Բաղալովը հասանելի է եղել միայն դիտարկահար զենքի համար»: Իսկ դա պատասխանատվությունն ադրբեջանական զինված ուժերի՝ նույն Օրթա Գարվանդ-Շիխլար ուղղությունում տեղաբաշխված ստորաբաժանումներից հեռացնելու նպատակով է միայն արվել:

Այսպիսով, Աղդամի շրջանի դատախազի եւ Ադրբեջանի ՊՆ մամլո խոսնակի՝ նույն միջադեպի առթիվ տարածած՝ միմյանց բովանդակային առումով հակասող հաղորդագրությունների անգամ թռուցիկ վերլուծությունից պարզ է դառնում, որ հրադադարի խախտում, ինչպես ասել է ԼՂՀ ՊԲ մամլո խոսնակ **Սենոր Հասրաթյանը**, այդ եւ նախորդ օրերին նշված ուղղությունում չի եղել: Բացառված չէ, որ Ֆարիզ Դաղալովը զոհվել է ադրբեջանցի կարգազանց զինվորի պատահական արձակած գնդակից կամ դարձել վրեժխնդրության զոհ:

Բայց ի՞նչ իմաստ ունի քաղաքականացնել երեխայի մահը: Մանավանդ՝ այդքան «քարանձավային» ոճով:

ՎԱՀԲԱՐ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԻՇԵՑՈՒՄ

Իսկ ինչի՞ մասին պայմանավորվեցիք Սոչիում

ԼՂՀ իշխանությունների հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, մարտի 10-ին ԵԱՀԿ առաքելությունը նախատեսում էր երկու դիտարկում Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծի՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղից դեպի արեւելք եւ Ակնա բնակավայրի մերձակայքում՝ Ասկերանի ուղղությամբ: Թանձր մառախուղի պատճառով առաջին դիտարկումը չի կայացել: Լեռնային Ղարաբաղի ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի առաջարկով Ասկերանի ուղղությամբ իրականացրած դիտարկման ժամանակ ադրբեջանական կողմը, ի տարբերություն ղարաբաղյան կողմի, ԵԱՀԿ առաքելությանը դուրս չի բերել իր առաջնային գծի՝ նախօրոք փոխհամաձայնեցված կետ, դիտարկման խմբերը սխալված են եղել դիտարկումն իրականացնել ավելի հեռավոր տարածությունից: Ընդամենը 5 օր առաջ՝ մարտի 5-ին, Սոչիում Ադրբեջանի նախագահը ՀՀ եւ ՌԴ նախագահների հետ միասին հանդես եկավ հայտարարությամբ, որի կետերից մեկում ասվում է. «Ձգտել բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով եւ կրակի դադարեցման գծի երկայնքով՝ կողմերի մասնակցությամբ, անցկացնել հնարավոր միջադեպերի հետաքննություն՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո եւ ԵԱՀԿ գործող նախագահողի հատուկ ներկայացուցչի աջակցությամբ»: Դե, եթե սովորական մոնիտորինգի ժամանակ Ադրբեջանը խուսափում է ԵԱՀԿ դիտորդներին դուրս բերել «կրակի դադարեցման» առաջին գիծ, ապա, ինչ խոսք, նման ցանկություն չի ունենա «բոլոր վիճելի հարցերը՝ հետաքննելու» ժամանակ, մանավանդ որ վերջին հետաքննությունների ընթացքում կարող է պարզվել, թե ի՞նչ հանգամանքներում է մահացել Աղդամի շրջանի գյուղերից մեկի բնակիչ ադրբեջանցի երեխան, որքան էլ ցավալի է այս մասին ասել՝ եթե, իհարկե, նման երեխա կա եւ մահացել է: Ուրեմն հասկանալի է, որ Բաքուն, հերթական անգամ չի հարգի իր իսկ նախագահի ստորագրությունը, եթե նրան այդ ցանկությունը չպարտադրեն կոնկրետ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւ ԵԱՀԿ նախագահողի անձնական ներկայացուցիչը:

ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային օգնականներ Անտալ Հերդիչը (Հունգարիա), Քրիստո Քրիստովը (Բուլղարիա): Հակառակ կողմից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գրասենյակի համակարգող, փոխգնդապետ Իմրե Պալատինուսը (Հունգարիա) եւ դաշտային օգնականներ Վիլյամ Պրայորը (Մեծ Բրիտանիա) եւ Ժասլան Նուրտազինը (Ղազախստան): Դիտարկման առաքելությանը ղարաբաղյան կողմից ուղեկցել են ԼՂՀ արտաքին գործերի նախարարության եւ ԼՂՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները:

Հ. ԱՓՅԱՆ

Վահագն Չախալյանին ազատ արձակելու միջոցներ ձեռնարկելու կոչ միջազգային կառույցներին

2011 թ. փետրվարի 23-ին հայ բլոգերները հրապարակել են հանրագիր, որով միջազգային կառույցներին կոչ է արվում միջոցներ ձեռնարկել՝ ուղղված ջավախահայության նկատմամբ «վրաց իշխանությունների խստական քաղաքականության կասեցմանը եւ ջավախահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանի ազատ արձակմանը»:

Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը, իր իսկ հայտարարության համաձայն, ողջունում է հայկական բլոգոսֆերայի այս նախաձեռնությունը եւ հայտարարում հանրագրին միանալու մասին:

«Կոչ ենք անում ջավախահայության խնդիրներով մտահոգ բոլոր կազմակերպություններին եւ անհատներին միանալ ստորագրահավաքին», նշված է Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհրդի հայտարարությունում:

Ա. Հ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 10.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: